Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3147

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՅՈՒ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հրատարակեց իւր յառաջաբանով

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՊԵՄ
ՄԱՍՆԱՐԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Յ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
1892

Дозволено цензурою, Тифлисъ, 3 апрѣля 1892 года.

Типографія И. Мартиросіанца, Орбел. ул. д. № 1—2

ՑԱՆԿ

1. Ազդ.
2. Կ. Կոստանեանցի «Ս. Էջմիածնի վերանորոգութիւնն ԺԸ դարում».
3. Թոմայի Յիշատակարանը.
   Ա. Վասն միաբանութեան Հայոց.
   Բ. Յաղագս Էջմիածնի օրհնութեան.
   Գ. Վասն աքսորման տէր Կիրակոս կաթուղիկոսի.

ԱԶԴ

Այս առաջին անգամն է, որ տպագրութեամբ լոյս է տեսնում Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը։ Նորանից մի քանի համառօտ հատուածներ միայն ամփոփել է իւր Այրարատի մէջ Հ. Ղ. Ալիշանեան բազմարդիւն բանասէրը։ [1])

Մեր ընտրած բնագիրն 1886 թուին ընդօրինակեցինք Վսեմ. Կարապետ Եղեանցի ձեռագրից, որ բովանդակում է իրեն մէջ ուրիշ շատ մատենագրական գործերի հետ միասին և Թովմա Մեծոփեցու պատմութիւնը։ [2]) Այդ ձեռագրի գրչութեան տարին է 1668 թիւը և, ինչպէս երևում է, արտագրուած է 1597 թուի մի այլ ձեռագրից։[3]) Այնուհետև թէպէտ մեր ձեռքն անցան և այլ գրչեայ օրինակներ, սակայն մեր առձեռն բաղդատութիւններից երևցաւ, որ մեր առաջին ընդօրինակութիւնն աւելի մաքուր և ճիշդ է։ Իւր տեղում նշանակել ենք մի քանի էական տարբերութիւնները, հանելով Մայր Աթոռի գրադարանի երկու գրչեայ օրինակներից, որոնցից մէկն արտագրուած է 1664 թուին Տփխիսի Ս. Աստուածածնի եկեղեցում, իսկ միւսն յիշատակարան չունի։

Թովմայի յիշատակարանն ունի ընդ ամէնն երեք գլուխ։ Նա պատմում է հայոց հայրապետական աթոռի

---

[1]) Տես Այրարատ եր. 215, 216 և 300.

[2]) Տես Ստեփ. Տարօնեցւոյ Ասողկան Պատմ. տիեզերական, Ս.-Պետերբուրգ 1885, Յառաջաբան, ԼԲ. ԼԴ. ԼԶ։

[3]) Նոյն, Յառաջ. ԼԴ. ԼԸ.

փոխադրութիւնը Սսից Վաղարշապատ, նկարագրում է 1441 թուի համազգային ժողովը, Կիրակոս Վիրապեցու ընտրուելու և ապա երկու տարի յետոյ աթոռից ընկնելու հանգամանքները։ Յիշատակարանի վերջում կար և առանձին մի յիշատակարան Թովմայի աշակերտի՝ Կիրակոս վարդապետի գրածը, որ մենք բաց թողինք։ Նորա մէջ Կիրակոսը պատմում է իւր վարդապետի կենսագրութիւնը, որը մենք յոյս ունինք մօտիկ ապագայում հրատարակելու Թովմայի պատմութեան հետ միասին, քանի որ նորա տպագրութիւնն արդէն սպառել է *). այն ժամանակ կը հրատարակենք և Կիրակոսի յիշատակարանը։

Թովմայի Յիշատակարանի լուսաբանութեան և Հայոց հայրապետութեան նախընթաց վիճակը պատկերացնելու համար մենք կարևոր դատեցինք հրատարակութեանս սկզբում դնել և մի յառաջաբան „Ս. Էջմիածնի վերանորոգութիւնը ԺԵ. դարում" վերնագրով։

---

*) Թով. Մեծոփ. Պատմ. Լանգլէմուրայ. 1860, Փարիզ։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆ

ԺԵ. ԴԱՐՈՒՄ

—

«Միշտ անշարժ պահե՛ա զաթոռ Հայկազնեայ»։

Յովհան Սարկաւագի։

—

1441 թուին Երևանն ականատես եղաւ մի տարօրինակ հանդէսի։ Մի խումբ հայ կրօնաւորներ ժողովուել էին Հայաստանի զանազան կողմերից և գումարուել էին այնտեղ։ Քրիստոնէական ժողովուրդը շատ վաղուց էր, որ այնքան վարդապետ ու եպիսկոպոս միատեղ գումարուած չէր տեսել։ Ուրախութեան սրտաշարժ ցոյցերով ողջունեցին նոքա ս. հայրերին. «փողք զանգակացն գոչէր, երիտասարդքն գոչէին, ծերքն աղաղակէին, մանկունքն խայտային, կանայք երկրպագութեամբ և լալով զամենեսեան զարհուրեցուցանէին» ասում է ականատես պատմիչ Թովմա Մեծոփեցին։ Այլազգիներն անգամ զարմացած էին հայոց այսպիսի հոգևոր շարժման վերայ։ Հաւատարիմ հպատակների խնդութեան խնդակից մահմետական իշխանն՝ Աղուպէկն անձամբ իւր զօրքով առաջնորդեց ս. հայրերին դէպի Վաղարշապատ, «փողով

և թմբկով» հասցնելով նոցա իրենց ուղևորութեան նպատակին։

Ո՞վ էին նոքա և ո՞ւր էին եկել։

Սսի հայրապետական աթոռի վատթար կացութեան դէմ բողոքող ս. հայրերն էին նոքա, և եկել էին Վաղարշապատ՝ հայոց Մայր Աթոռի վերանորոգութեան երկունքն երկնելու։

Ա.

Սսի աթոռն սկիզբն առաւ ԺԳ. դարի վերջերում, երբ հայոց հայրապետական աթոռատեղին՝ հռոմկլայի դղեակն ընկաւ Եգիպտոսի Ամիրայի ձեռքն և Ստեփաննոս կաթուղիկոսն հայրապետանոցի զարդերով ու Ս. Նշաններով գերի տարուեցաւ Եգիպտոս, ուր և գերութեան մէջ կնքեց իւր մահկանացուն։ Կիլիկիոյ հայոց թագաւորն հեթում Բ. հայոց հայրապետական թափուր գահի վերայ 1293 թուին հաստատեց Գրիգոր Է. Անաւարզեցուն, աթոռատեղի նշանակելով Սիս մայրաքաղաքը [1]։ Այդ ժամանակից այն է 1293 թուից մինչև 1441 թիւն 147 տարուայ մէջ 8 կաթուղիկոս յաջորդեց Սսում հայրապետական աթոռի վերայ։ Այդ կաթուղիկոսները չկարողացան սակայն իրենց աստիճանի բարձրութեան վերայ մնալ և իբրև մտքերի ղեկավարութեան ընդհանուր ուղղիչ անընդունակ եղան առաջնորդելու ս. եկեղեցու հօտին ողջամիտ և խաղաղ ուղղութեամբ։ Նոցանից նշանաւորներն ընդհակառակն ընկան արտաքին ազդեցութեան տակ և կողմնակի շահերը գերադասեցին

[1]) Տես Ստեփ. Օրպէլ. Պատմ. գլ. կէ։

բուն եկեղեցու աւանդական շահերից։ Այս է պատճառը, որ հայոց եկեղեցական պատմութեան մէջ Սսի կաթողիկոսարանի անունը կապուած է անհարազատ, դիւրափոփոխ, եկեղեցին ժամանակի հանգամանքներին ծառայեցնող, օտարամոլ և վնասակար ուղղութեան հետ։ Սսի առաջին կաթուղիկոս Գրիգոր Է. Անաւարզեցին ինքն եղաւ այդ ուղղութեան հեղինակն և աւանդողն իւր յաջորդներին։ Այն, որ կոչուած էր պահպանել եկեղեցու միութիւնը, հսկել հօտի ապահովութեան և ամբողջութեան վերայ, և լուսաւոր վարդապետութեամբ կազդուրել ժողովրդի միտքը, եկեղեցու աւանդութիւնների հակառակ ընթանալով, վրդովում է նորա հոգեկան անդորրութիւնն, և յառաջ է բերում խռովութիւններ, որոնք բնաւ ներդաշնակ չէին քրիստոնէական կրօնի բարոյական պահանջների հետ։ Այսպէս՝ Գրիգոր Է., ինչպէս ասում է ժամանակակից Ստեփաննոս Օրպէլեանը, «սխալեաց մեծապէս և ի բաց եկաց ի ճշմարտութենէն, զի թողեալ զբնական և զհայրենի շաւիղս նախնեաց սրբոց, հետևեցաւ ընդ թիւր և զարտուղի ընթացս Յունաց»։ Անաւարզեցին ինքն իբրև օտարասէր արդէն ժառանգել էր «հռոմ» մականունը, և իբրև ազատամիտ, թիւր հասկացած լինելով ազատամտութիւնը, դնում է եկեղեցու մէջ այնպիսի փոփոխութիւններ, որոնք հիմք եղան ապագայ ապականութեան և խռովութիւնների [2]։ Իրեն ժամանակակից եկեղեցական դասի մէջ շատ հազուագիւտ էին Գրիգորի նման գիտուն, ուսումնասէր և առաքինի եպիսկոպոսները. նա մեծ հռչակ ունէր, և բազմաթիւ գրուածք-

[2]) Ստեփ. Օրպէլեան Պատմ. գլ. կէ.

ներով և շարականներով, որոնք մերժուած են, հանդիսանում է առաջիններից մէկը իւր ժամանակում [3]։ Սակայն այդ անձը շատ անարժան չի շատակներ թողեց պատմութեան մէջ։ Յունարէնի և ասորերէնի գիտակ, լատինասէր և միանգամայն օտարաւոր Գրիգոր Է. Անաւարզեցին ազատամտութեան ցոյց էր համարում և Հայոց եկեղեցու հաստատութեան օգուտ բերել էր կարծում, երբ ջնջեց Սև-լերան 1114 թուի եկեղեցական ժողովի բանադրանքն Աղթամարի վրայից և վաւերական ճանաչեց Աղթամարի հակաթոռ կաթուղիկոսութիւնը [4]), երբ ուզեց մտցնել Հայոց եկեղեցու մէջ լատինական ծէսեր, որոնք ինքն արդէն իւր առտնին մատուռի մէջ գործ էր դնում, և երբ եկեղեցիների միաբանութեան ջատագով հանդիսանալով, հրատարակեց իւր հաւատոյ ձեռնարկը, որ մերժուեցաւ սակայն Հայոց արևելեան վարդապետների մի ազգու թղթով։ Եւ ինչ էր իսկապէս նորա արածը։ Նա 1294 թուին, հետևելով յունաց և լատիններ այն տարուայ շփոթուած տումարին, Ծաղկազարդի օրն հրամայեց Ս. Յարութեան տօն կատարել և զատիկ անել, և թագաւորին համոզելով «բռնութեամբ տօնեաց և ետ տօնել ամենայն աշխարհին Կիլիկեցւոց»։ Նա արգելեց Հայ ժողովրդին թաթախման երեկոյին նախնական սովորութեան համեմատ պաս լուծել. նա սկսեց մէկ մէկ հեռացնել եկեղեցուց ազգային նախնական աւանդութիւններն և կամաց կամաց մտցնել Հռոմ եկեղեցու բոլոր աւանդու-

[3]) Սիսուան եր. 241, 242.

[4]) Շամչ. Պատմ. Գ. եր. 289.

թիւնները. (յարաբերութիւն սկսելով Կ. Պոլսի Յունաց պատրիարքի հետ, խոստանում էր նորան ընդունել այն ամէնն, ինչոր Յոյները պահանջեն [5])։ Այդ դեռ բաւական չէ։ Նա հաւատացնում էր Հայոց արևելեան վարդապետներին, թէ իւր այնպիսի գործողութիւնների շարժառիթն Հայոց բարօրութեան խնդիրն է. «վասն նեղեալ ժամանակիս, ասում էր, կամիմք զմիաբանութիւն Հռոմոց ընդ մեզ և զամենայն ազգաց» [6])։

Անաւարզեցու այս գործողութիւններն յառաջ բերին երկու շարժումն։ Եղան այնպիսիները, որոնք հաւանութիւն տուին և կեղծ ազատամտութեամբ «սկսան եպերել զնախնիսն մեր և առնել նորաձևութիւնս և այլաձևութիւնս»։ Եղան և այնպիսիները, և այդ անշուշտ մեծամասնութիւնն էր, որ ոչ միայն չհաւանեցան նորա գործերին, այլ նաև դիմադրեցին. Օրպէլեանն ասում է, որ «ի պարկեշտ վաներն» չընդունեցին նորա կարգադրութիւնը, եպիսկոպոսներից և վարդապետներից շատերը նոյնպէս չընդունեցին իրենց վիճակներում. այդ պատճառով շատերն հալածական եղան, ծեծ ուտելով և աքսոր գնալով. և այս անկարգ գործողութիւնների պատճառով շատերը դայթակղուեցան կաթուղիկոսից։ Այսպէս էր Կիլիկիայում։ Իսկ արևելեան կողմն Հայաստանում ևս առաւել զայրացած էր դժգոհութիւնը։ Այնտեղ մարդիկ տանից տուն ման գալով, ամեն տեղ շշնչում էին, և այս շշուկն էին տարածում թէ «մեր կաթուղի-

[5]) Ստ. Օրպէլ. Պատմ. գլ. կէ.

[6]) Ստ. Օրպէլ. Պատմ. գլ. կէ.

կոսն Հռոմ է և նոցա հետ դաշնակից»։ Օրպէլեան՝ ասում է իւր թղթի մէջ Անաւարզեցուն թէ դեռ 1287 թուին, երբ ինքը Սիս էր և սկսած է կաթուղիկոս ընտրէին, Կարմիր Վանքի վանականներն «զականջս մեր խիտ առ խիտ տաղտկացուցին» նոյնն ասելով, թէ Անաւարզեցին Հռոմ է, և այդ պատճառով էլ այն անգամ հակառակ Լևոն Գ. թագաւորի ցանկութեան Անաւարզեցին չընտրուեցաւ կաթուղիկոս, այլ Կոստանդին Պրօնագործը։ Արևելեան Հայոց վարդապետներն Ստեփաննոս Օրպէլեանի առաջնորդութեամբ, որ Սիւնեաց մետրապոլիտն էր, Գրիգոր Է. Անաւարզեցուն մի թուղթ են գրում ժողովով, յիշեցնում են նորա պարտականութիւններն և առաջարկում են նորան հրաժարուել նորաձևութիւններից. նոքա պահանջում էին, որ Անաւարզեցին քաղկեդոնականների հետ յարաբերութիւն չունենայ, պատարագի ժամանակ նոր ծէսեր չներէ, Հռոմ եկեղեցի չմտնի և տօները նոցա հետ չկատարէ, Ճրագալոյցի նաւակատիքն հին սովորութեամբ լինի և այն։ Բոլոր իրենց պահանջները պարզելուց յետոյ արևելեան վարդապետներն այսպէս են ամփոփում իրենց խօսքը. «ընդէ՞ր է երկայնել մեզ զբանս. հաւան եմք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ Հռոմոց յերկինս ելանել։» Նոքա խնդրում են, որ Գրիգոր Է. իրենց պահանջներն հաւատարմութեամբ կատարելու համար գրով ուխտէ և գիրն ուղարկէ իրենց. միևնոյն ժամանակ յայտնում են, որ չպիտի հնազանդին նորան և ճանաչեն իրենց գլուխ, եթէ նա գրով չխոստանայ անաղարտ պահպանել ս. եկեղեցու աւանդութիւնները կամ յապաւումներ և յաւելուածներ

չներել ս. եկեղեցու վարդապետութեան և ծէսերի մէջ [7])։

Այսպէս սկիզբն դրուեցաւ այն սառնութեան և կասկածների, որ արևելեան Հայերն ունէին դէպի Սսի կաթուղիկոսարանը։ Ապաբաղդաբար Կիլիկիոյ Հայոց գործերի ձախող ընթացքով հետզհետէ ևս առաւել զօրանում էր այդ ներքին ատելութիւնը, որին ոչ պակաս նիւթ էին տալիս և կաթուղիկոսների անձնական թուլութիւնները։ Այս երևում է հէնց Գրիգոր Անաւարզեցու յաջորդի Կոստանդին Բ. Պրօնագործի ժամանակ։ Այդ անձն երկու անգամ ընտրուեցաւ կաթուղիկոս. առաջին անգամ 1287 թուին, երբ դեռ աթոռն Հռոմկլայումն էր, Կոստանդին Բ. հովուեց երեք տարի, և ընկաւ աթոռից Հեթում Բ. թագաւորի հրամանով 1290 թուին։ Թէև Ստեփաննոս Օրպէլեանը մեծ նախանձախնդրութեամբ յարձակւում է Կոստանդինին հալածողների վերայ, բայց նորա պատմութիւնից երևում է, որ Կոստանդինի վերայ բարդուած 30 զրպարտութիւնների մի մասն է միայն անհիմն։ Օրպէլեանը կաթուղիկոսի յանցանքը թեթևացնել է աշխատում, երբ յիշում է զրպարտութիւններից մէկը, թէ «առնու հարկս ի լկտանոցացն, որ ի Հռոմկլային». նա առանց հերքելու լկտանոցի գոյութիւնն Հռոմկլայում այսպիսի յանդիմանական խօսքեր է ուղղում թագաւորին. «ով դատաւոր, ասում է, այդ սահման է յամենայն յընդհանրական քաղաքս Հայոց և Յունաց և ամենայն ազգաց... թէ բարեկարգութիւն խորհեցար առնել ազգիս, այդ թագաւորի է գործ, նախ դու բարձ ի քումէ թագաւո-

[7]) Ստ. Օրպէլ. Պատմ. գլ. կը.

րութենէդ և ապա հրամայեա ամենեցուն բառնալ»։

Կոստանդինի վերայ եղած միւս զրպարտութիւնն այն էր, թէ պատարագից յառաջ շարբաթ էր խմում։ Եւ Օրպէլեանը դարձեալ մեղմացնում է առանց հերքելու եղելութիւնը. եթէ, ասում է, կաթուղիկոսն այդ արած էլ լինի, ագահութեան կամ աներկիւղութեան պատճառով չէ արել, այլ մարմնի տկարութեան պատճառով։ Օրպէլեանի այս երկու բացատրութիւնից արդէն կարելի է մակաբերել, թէ նա, որ այնքան խստապահանջ էր Գրիգոր Է. Անաւարզեցու նկատմամբ, շատ ներողամիտ հայեացք է յայտնում Կոստանդին Բ. Պրօնագործի թերութիւնների վերայ։ Մինթէ արդարև ներելի էր, որ կաթուղիկոսը լկտանոցներից հարկ առնի, ուրեմն իսկապէս լկտանոցների գոյութիւնն ընդունէ և պաշտպանէ, կամ թէ ինչ պատճառով կ'ուզէ լինի, թոյլ տայ իրեն՝ պատարագից յառաջ բան խմելու։

Եթէ Ստեփաննոս Օրպէլեանը կողմնապահութիւն չի անում, նշանակում է, որ արդէն այնքան շփոթուած էին այն ժամանակուայ մտածող անձինքների հայեացքները, որ չէին կարող զանազանել սկզբունքը հաճոյքից։ Բայց կայ և մի այլ հանգամանք. նոքա ձգտում էին պահպանել գլխաւորապէս հաւատը և վարդապետութիւնը. և այդ է պատճառը, որ նոցանից մէկն՝ Ստեփաննոս Օրպէլեանը մեծ նշանակութիւն չի տալիս Կոստանդինի յանցանքներին, որոնք, ինչպէս նա ասում է, «երբէք ոչ տային կարծիս վնասու ինչ ի հաւատ կամ յեկեղեցի [8])»։ Այսպէս ուրեմն՝ Կոստանդին Բ. իբրև յանցաւոր ոմն ժամա-

[8]) Ստ. Օրպ. Պատմ. կէ.

նակից յառաջ զրկւում է աթոռից, թէև նորա վիճակի այդպիսի օրհասական վախճան ունենալու մէջ մեծ նշանակութիւն է ունեցել և Հեթում թագաւորի անձնական ատելութիւնը դէպի նա։ Կոստանդին Բ. կամաւ խոստովանում է իւր յանցանքը, ինքը բազմութեան աչքի առջևն զգեստաւորւում է հայրապետական ձևով, ապա մէկ մէկ հանում մէկդի է դնում իւր զգեստը, և խարազն հագնելով, յօժար կամքով թողնում հեռանում է Սսի Գլխիբացի եկեղեցուց։ Թշնամիները, կասկածելով, որ նա կը դիմէ արևելք և այնտեղ կը շարունակէ իւր իշխանութիւնը, յետեւից հասնում բռնում են և տանում բանտարկում են Լամբրօնի բերդում։ Այսպէս անարգուած ու մերժուած Կոստանդինը մնում է Լամբրօնի բերդում արգելուած այնքան ժամանակ, ինչքան որ տևեց Ստեփաննոս Դ. և Գրիգոր Է. հայրապետների հովուութիւնը [9])։ Վերջինիս մահից յետոյ, որ եղաւ 1306 թուին, Կոստանդին նորից ընտրուեցաւ կաթուղիկոս. այս անգամ հովուեց 16 տարի։ Հէնց նորա հայրապետութեան առաջին տարին 1307 մարտի 19-ին Սսի ժողովն ընդունեց Գրիգոր Է. Անաւարզեցու հաւատոյ ձեռնարկը, որի զօրութեամբ Հայերը պիտի խոստովանէին ինն յօդուածի մէջ սահմանուած նոր կանոններ, որոնք Հայոց եկեղեցուն հակառակ էին։ Ժողովի արձակուելուց յետոյ ոչ ոք չպահեց այդ կանոնները. միայն Սիս քաղաքում էին հետևում Անաւարզեցու ձեռնարկին։ Իշխաններն և ժողովուրդն այդպիսի մոլորութիւնը տեսնելով մայրաքաղաքում, Թշնամացան Լևոն Գ. թագաւորին և Հեթումին, որ առանձ-

[9]) Ստ. Օրպ. Պատմ. կէ։

նացած էր. այդ թշնամութիւնն այն տեղն հասաւ, որ նոքա ամբաստանութիւն արին այլազգի Պիլարդու իշխանի առաջ Լևոնի և Հեթումի վերայ. Պիլարդուն ժողովրդին գոհացնելու համար դաւաճանութեամբ բռնեց խոզխոդեց Հայոց թագաւորին։ Հեթումի եղբայրն Օշին Պիլարդուին վանելուց յետոյ 1308-ին օծուեցաւ թագաւոր և հրամայեց ընդունել Սսի ժողովի կանոնները։ Ոչ ոք չլսեց. հակառակութիւնը զօրացաւ։ Օշինը բռնացաւ վարդապետների վերայ, կրկին գումարել տուեց նոցա Սիս և ընդունել տուեց նախկին որոշումները. հակառակորդներն աքսորուեցան. տեղ տեղ ժողովուրդն և եպիսկոպոսներն ապստամբեցան. ժողովուրդն եպիսկոպոսներից, սոքա էլ թագաւորից։ Կարինում, օրինակ, որովհետև եպիսկոպոսը ս. բաժակի մէջ ջուր էր խառնել, ժողովուրդն սպանեց եպիսկոպոսին։ Երուսաղէմում Սարգիս եպիսկոպոսը բոլորովին մերժեց թագաւորի և կաթուղիկոսի հրամանը, բաժանուեցաւ նոցանից և 1311 թուին անկախ պատրիարք եղաւ Եգիպտոսի ամիրայի հրամանով։ Օշին 1316 թուին նորից գումարել տուեց ժողով Ադանայում, ուր շատ սակաւաթիւ եկեղեցականներ կային. ժողովն հաստատեց Անաւարզեցու ձեռնարկը և Սսի ժողովի կանոնները, բայց յետոյ ոչ ոք չընդունեց և չկատարեց։ Այնպէս որ Օշինը վերջապէս ստիպուեցաւ դադար տալ այդ խնդրին, որ 1294 թուից մինչև 1316 թիւն անդադար զբաղեցնում էր բոլորին [10]։

[10]) Զամչ. Պատմ. Գ. գլ. Լը.

Բ.

Այս խռովութիւնները, որոնց բուն հեղինակը Սսի կաթուղիկոսարանն էր, միանգամայն ջլատեցին Հայոց հայրապետական իշխանութեան ոյժը։ Հերձուածն օրըստօրէ յառաջանում էր։ Զկար մի զօրաւոր բազուկ, որ կարողանար սանձել պառակտումը և ժողովէր հօտը մի փարախի մէջ։ Սկզբնաւորած շփոթութեանն աւելի և աւելի նիւթ տուեց միևնոյն Սսի կաթուղիկոսարանն հէնց այն միջոցին, երբ նորա կոչումն էր ազգու միջամտութեամբ խափանել նոր միարարական շարժումներն արևելեան Հայոց մէջ։ Լատին քարոզիչներն արդէն տարածուել էին այդ ժամանակ արևելքում։ Նոցա քարոզութիւններին բազմաթիւ հետևողներ գտնուեցան և Հայերից. արդէն Յովհան վարդապետ Քռնեցին անցել էր լատինների կողմը. երկու մեծ վիճակների՝ Կարնոյ և Որմիոյ եպիսկոպոսները հետևել էին նոյն Քռնեցու շաւիղներին. հաւատափոխութեան խմորը, նոցա ձեռքով Հայոց մէջ տարածուելով, խմորեց շատերին հէնց այն պատճառով, որ Ժամանակի կաթուղիկոսն Յակոբ Բ. Սսեցին իւր կոչման բարձրութեան վերայ չմնաց [11]։ Նա սկզբում չհասկացաւ իւր անելիքն և կոյր գործիք եղաւ մոլորութեան ղեկավարների ձեռին։ Յակոբ Բ. Գրիգոր Անաւարզեցու քեռորդին, չունենալով նորա հաստատամտութիւնն և համբաւը, սակայն նորա հոգւովը գործելով, մեծապէս նպաստեց նորա ձեռնարկութիւնների յաջողութեանը. Հրամենալով զրկել

[11]) Զամչ. Պատմ. Գ. գլ. Ա.

ՄԱՏԵՆԱՏՈՒՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Կիլիկիոյ Հայոց Թագաւորին Հռովմայ պապի ղրկած 30 հազար ոսկու միանուագ նպաստից, որը պապի դեսպանը չէր ուզում յանձնել, պատճառելով թէ արևելեան Հայերն հալածում են Հռովմայ քարոզիչներին, Յակոբ Բ. 1331 թուի մարտի 6-ին մի շրջաբերական թուղթ ուղարկեց իւր Ժողովրդին և պատուիրեց ոչ միայն չհալածել, այլ մինչև անգամ ձեռնտու լինել միարարութեան քարոզիչներին։ Այն ժամանակ հռովմէական արբանեակներն, երես առած և քաջալերուած, ներեցին իրենց այնպիսի անկարգութիւններ և սրբապղծութիւններ, որոնք ոչ միայն ս. եկեղեցու, այլ նոյն իսկ մարդկային արժանապատուութեանը վայել չէին։ Նոքա սկսեցին զանազան թիւր և մոլար միջոցներով որսալ միամիտ Հայերին և բռնութեամբ կատարել նոցա վերայ այն ս. խորհուրդները, որոնք նոքա մի անգամ ընդունել էին. նոքա մկրտում և դրոշմում էին կրկին անգամ ամէն մի Հայ քրիստոնէի, որ դառնում էր նոցա աշակերտ, երկրորդ անգամ ձեռնադրում էին այն եկեղեցականներին, որոնք արդէն ձեռնադրուած էին. և այդ գործողութիւնները կատարում էին նոքա ուր որ պատահէր առանց ընտրելու տեղի պատշաճաւորութիւնը, մինչև անգամ բաղնիքներում, հրապարակներում, այգիների հնձաններում և ճանապարհների վերայ։ Եւ երբ այս ամէնի մասին արդարացի բողոքներն ամէն կողմից միահամուռ տեղացին ղէպի կաթուղիկոսարանն, այն ժամանակ միայն Յակոբ Բ. Սսեցին ստիպուեցաւ միջոցներ ձեռք առնել չարիքը խափանելու։ Նա թուղթ գրեց արևելք միարարներին և յորդորեց նոցա զգուշանալ։ Լևոն Դ. թագաւորին

իրեն գործակից ունենալով, նա բռնել տուեց խռովութեան պարագլուխներին, թուղթ գրեց Հռովմայ պապին, որ խռովարարներին սանձէ և այլն։ Բայց արդէն ուշ էր։ Ճարպիկ միարարները կարողացան խաբել և կաթուղիկոսին և պապին. նոքա սկսեցին մտքերը պղտորելու համար զանազան ամբաստանագրերով լցնել պապի դիւանը, և Կիլիկիոյ թագաւորական խարխուլ և անկայուն վիճակի բոլոր հանգամանքներին մեղսակից ներկայացնել կաթուղիկոսի և թագաւորի անհաւատարիմ գործակալներին, որոնք իբր թէ հալածում են երկրի լուսաւորութեան նախանձախնդիր հռովմէական պաշտօնեաներին։ Այդ ժամանակ արդէն եգիպտական սուրը կախուած էր Լևոն արքայի գլխին. նա պարտաւորուել էր բնաւ յարաբերութիւն չունենալ արևմուտքի հետ. Յակոբ Բ. սկսեց հակառակել Լևոնին. միևնոյն ժամանակ հանդէս եկան նոր կրօնական խնդիրներ և վէճեր, որոնց աւելացաւ և Հռովմայ պապի պահանջն Հայերից՝ բացատրութիւն տալու 117 մեղադրանքների դէմ, որ միարարները բարդել էին Հայոց վերայ։ Այս ամէնի հետևանքն այն եղաւ, որ 1340 թուին Լևոն Դ. հեռացուց աթոռից Յակոբ կաթուղիկոսին և նորա փոխարէն աթոռի վերայ հաստատեց Գռներցի Մխիթարին[12]), որ ժողովրդական անունով տէր Մխիկ էր կոչւում։ Մխիթարն եկեղեցական ժողովով հերքեց յիշեալ ամբաստանագրի կէտերը, բայց չկարողացաւ միարարական շարժումները խափանել. արևելեան Հայոց մէջ Նախիջևանի շրջակայքում և մի քանի ուրիշ տե-

[12]) Ղամչ. Պատմ. Գ. 40. 42. Սիսուան 147.

ղերում հաստատուել էին արդէն միարարներն և ունէին իրենց վանքերը։ Որմիոյ եպիսկոպոսը Ներսէս Պալիենց և Կարնոյ եպիսկոպոսը Սիմէօն պէկ ուրիշ արբանեակներով շարունակ խառնում խռովում էին ժողովուրդը։ Աթոռազուրկ Յակոբ կաթուղիկոսը, թերևս իւր գաղը պաշտպանելու համար, ճանապարհորդելով Գաղղիա, 1354 թուին ներկայանում է Աւինիոնում Հռովմայ պապին, և վերադառնալով Սիս, նորից ժառանգում է հայրապետական աթոռն 1355 թուին Մխիթարի մահից յետոյ։ Խռովութիւններն այդպիսով շարունակում են կրօնի սրբութեան անունով գոյութիւն ունենալ աւելի կամ պակաս չափով, մինչև որ Արտազեցի Մեսրոպ կաթուղիկոսին յաջողում է 1361-ին մի ժողով գումարել և վերջնակապէս որոշումն հաստատել, որ եկեղեցական ծէսերն ու արարողութիւնները նախնական մի օրինակութեան մէջ պահուին և ս. խորհրդի բաժակի մէջ ջուր չխառնեն [13]։

Գ.

Այս մօտ եօթանասնամեայ խռովութիւնների ժամանակը բաւական էր, որ կազմուէր Հայոց մէջ մի ընդդիմադիր մեծամասնութիւն, որն երես դարձնելով Սսի աթոռից, ձգտէր վերականգնելու Հայոց եկեղեցական կացութեան պատշաճաւոր վիճակը։ Արդէն արտաքուստ բաժանուած էին Հայերն իրար մէջ։ Կային միարարներ կամ ունիթոռներ. սոքա անպայման կաթոլիկներ էին, և բացի լեզուից ամէն բան հռով-

[13]) Շամչ. Պատմ. գլ. 42.

մէական ոգով էին ճանաչել և կատարում. Հայերը նոցա անուանում էին աղթարմայ, որ գրեթէ նոյնանիշ է կախարդ բառին։ Կային Սսոյ միաբաններ. սոքա ճանաչում էին Սսոյ և Ադանայի ժողովների կանոնները, և իսկապէս բաժանուած կամ պայմանաւոր Հայեր էին։ Այս երկու հեստեալ խմբերին հակառակ էր Հայոց մեծամասնութիւնը և կազմում էր մի առանձին ընդարձակ խումբ. նոքա մերժում էին թէ Հռովմայ եկեղեցու վարդապետութիւնը, ծէսերն և արարողութիւնները, թէ պապի գլխաւորութիւնը, թէ յիշեալ երկու ժողովի կանոնները և թէ Սսի կաթուղիկոսարանի անպայման հեղինակութիւնը. նոցա Սսեցիք իրենց տեղական բարբառով անուանում էին սոնթ [14]։ Ահա այս սոնթերը (արհամարհական է թէ յարգական այդ անուանակոչութիւնը, չենք կարող որոշել) միացած ազգային եկեղեցու աւանդութիւններով և նորա անկախ ու անարատ կացութեան գաղափարով, ամէն ճիգ և հնար գործ են դնում ս. Եկեղեցին մաքրել եկամուտ տարրերի ազդեցութիւնից։ Այս է ահա Հայոց ընդդիմադիր մեծամասնութիւնը։ Ո՞վ են նորա ղեկավարներն, ինչպէս ձևացաւ և կազմակերպուեցաւ այդ մեծամասնութիւնը և ինչպէս գործեց, ահա խնդիրներ, որոնց լուսաբանութեամբ միայն կարող է պատկերանալ Ս. Էջմիածնի վերանորոգութեան նշանաւոր երևոյթը։

Միարարական շարժումների պարագլուխն Յովհան Քոնեցին Գայլեձորի առաջնորդ Եսայի վարդապետ Նչեցու աշակերտն էր։ Եսայի Նչեցին ունէր

[14]) Մխիթար Ապարանցի. տես Շամչ. Պատմ. Գ. 40.

Յովհանից զատ նաև ուրիշ շատ աշակերտներ, որոնց մէջ նշանաւոր էր Յովհան Որոտնեցին։ Թէ Եսային և թէ նորա աշակերտներն առաջին բողոքաւորներն էին միարարական շարժումների դէմ. նոցա ազդեցութեամբ և կազմուեցաւ ընդդիմադիր տարրը [15]։ Առաջին կազմակերպողն եղաւ Յովհան Որոտնեցին, որ, Թոմա Մեծոփեցու ասելով, «ժողովեց բոլոր գաւառներից շատ աշակերտներ, լուսաւորելով զարդարեց Հայոց ազգը վարդապետներով, քահանաներով, գեղեցիկ կարգերով և ուղղափառ վարդապետութեամբ, մանաւանդ, ասում է, օր ու գիշեր մաքառելով Երընջակ գաւառի քրիստոսատեաց աղթարմաների դէմ [16]։» Յովհան Որոտնեցու հոգին անցաւ և նորա աշակերտների վերայ։ Նոցա մէջ շատերն եղան նշանաւոր։ Նախ՝ «անմուտ արեգակն, երկրորդ լուսաւորիչն» Գրիգոր Տաթևացին «առատ և ճոխ բանիւ, ոչ գոլով նման նմա յազգս ամենայն», ասում է Թովման։ Երկրորդ՝ նորա ընկերը Սարգիս մականունեալն մեծ վարդապետ, որ «ունէր մարգարէութեան հոգի և Ադամայ որդւոց մէջ խոնարհութեամբ և հեզութեամբ իւր նմանը չունէր»։ Երրորդ՝ «պատկառելի քաջ վարդապետն Վարդան», որ Թովմայի ասելով Հայոց բոլոր վարդապետներից բարձր էր «իմաստութեամբ, խրատուք և աւաքինութեամբ»։ [17]) Այս նշանաւոր վարդապետներն ունէին բազմաթիւ ընկերներ։ Նոքա Յովհան Որոտնեցու նման ամէնը մի առանձին վանք

[15]) Միարարների վերայ միանգամ խօսել ենք. „Հայոց վանքեր“ եր. 66.

[16]) Թովմ. Մեծոփեցի պատմ. եր. 14.

[17]) Թոմ. Մեծոփ. եր. 17. 35- 41.

ընտրեցին և ժողովեցին իրենց շուրջը բազմաթիւ աշակերտներ՝ նախապատրաստելու նոցա «աղթարմաների» կամ «ճշմարտութեան ուրացողների» դէմ։ Այդպիսով նշանաւոր եղան Տաթև, Ապրակունիս, Սաղմոսավանք, Խառաբաստայ և Մեծոփայ վանքերն իբրև նոր կեդրոններ լուսաւորութեան։

Աղթարմաների դէմ մաքառող վարդապետներն ակնյայտնի զինուորում էին նոցա դէմ նոցա զէնքերով, աշխատում էին ուսումնասիրել նոցա գրքերը, իմանալ նոցա հնարագիտութիւնները և այնպիսով դիմադրում էին նոցա։ Թէպէտև այդ ճանապարհով նոքա՝ հեշտութեամբ ընտելանալով աղթարմաների հայեացքներին անգիտակցաբար ընկնում էին և նոցա ազդեցութեան տակ, սակայն այդպիսի դէպքերում մեծ վարդապետների մոլեռանդութեան հասուցած խիստ նախանձախնդրութիւնը վերջ էր դնում մոլորութեանը։ Ահա թէ ինչպէս է պատմում Թովմա Մեծոփեցին մի այդպիսի դէպք, որ գեղեցիկ պատկերացնում է նախ Հայոց մէջ արմատացած ատելութիւնը դէպի միարարներն և ապա նոցա դիմադրութեան եղանակը [18]։ Թովման պատմում է, որ մի անգամ միարարներից մէկն եկաւ Ապրակունեաց վանքը մեծն Սարգսի մօտ և ասաց. «ես երբեմն աբեղայ ի ձէնջ եղեալ եմ, բայց սատանայ կորոյս զիս և արար քաղկեդոնական, և սիրտ իմ հանապազ խոցի ի դէմս ձեր անարգութեան և հայհոյութեան.» այս ասելով, նա տալիս է Սարգսին Առաքինութեանց գիրքը, որ միարարները թարգմանել էին լատիներէնից. միև-

[18]) Թոմ. Մեծոփ. եր. 37—40.

նոյն ժամանակ յայտնում է, որ ճագարակեր Կարապետ վարդապետի աշակերտներն այդ գիրքն ուսումնասիրել են և մտադիր են գալ Սարգսի մօտ նորան հարցեր տալու։ Սովորաբար միարարներն իրենց հըմտութիւններն երևցնելու և հակառակորդների տկարութիւնն ապացուցանելու համար գալիս էին Ապրակունեաց վանքը, որ իրենց կեդրոնից հեռու չէր (Երնջակի մօտերը) և հարցեր էին առաջարկում Սարգսին։ Այս անգամ էլ նոքա եկան. Սարգիսն արժանաւոր պատասխանները տալով արձակեց նոցա։ Իսկ նորա աշակերտները որ վաղուց լսել էին Առաքինութեանց գրքի համբաւը, խնդրեցին իրենց վարդապետից, որ այդ գրքի վերայ դաս խօսի։ Մեծ վարդապետը կատարեց նոցա ցանկութիւնը. բայց հետեւանքը վատ եղաւ, որովհետև աշակերտներն այնպէս լաւ չէին ըմբռնել տակաւին եկեղեցու նախնի սուրբ հայրերի վարդապետութիւնը, որ այդ դասախօսութիւնը նոցա չվնասէր. ուստի նոքա «վաղվաղակի տկարացան ի հաւատոց և կամէին աղթարմայ լինել» և այդ իսկապէս իրենց վարդապետից ծածուկ։ Վանքի փակակալ Ստեփաննոս վարդապետը շուտով նկատեց Սարգսի աշակերտների մոլորուիլը և, երևի, այդ տպաւորութեան տակ երազի մէջ տեսաւ, որ Երասխը սաստիկ վարարած գալիս իրեն, Սարգսին և բոլոր աշակերտներին քշում տանում է, Սարգիսն և տեՍփաննոսն ազատւում են, իսկ աշակերտները կուր են գնում կատաղի ալիքներին։ Նա իւր երազը պատմեց Սարգիս վարդապետին և Մաղաքիա ճգնաւորին. նոցա համար շատ պարզ էր երազի իմաստը. նոքա իբրև Նախախնամութեան շնորհ նկատեցին այդ յայտնու-

թիւնը և, իրենց վերայ ընդունելով երազի գուշակութիւնն, սկսեցին «իրենց երեսներին ծեծել, մօրուքները փետել, գլխներին տալ, ողբ ասել ինչպէս մեռելների վերայ և անմխիթար սգով լալ աշակերտների հոգևոր մեռելութեան և կորստի վերայ»։ Պէտք էր ցաւին դարման անել. անմիջապէս մարդ ուղարկուեցաւ Տաթևու վանքը՝ Յոհան Որոտնեցուն օգնութեան կանչելու։ Նա իւր բազմաթիւ աշակերտներով և քահանաներով եկաւ Ապրակունեաց վանքը, ստուգեց եղելութիւնը, կանչեց Սարգսի աշակերտներին, յանդիմանեց ու դատապարտեց. «նոցա տարան բանտ դրին, ոմանց շղթայեցին և ոմանց էլ բրածեծ արին. իսկ Սարգիս վարդապետի նզովքի ազդեցութեան տակ աշակերտներից ոմանք գետակուր եղան, «ոմանք խայտառակեալ մերկս շրջէին», ոմանք փախան գնացին ֆռանկների աշխարհը, և այնտեղ կրեցին իրենց պատուհասը»։ Այսպէս ուրեմն ակներև է, որ Հայոց հայեացքով միարարներն այնպիսի մարդիկ էին, որոնցից պէտք էր փախչել ինչպէս աղթարմաներից (կախարդներից). և աբեղայի խօսքերը թէ «սատանայ կորոյս զիս և արար քաղկեդոնական», Ստեփաննոսի երազի մեկնութիւնը, և ողբով ու սգով աշակերտների «հոգևոր մեռելութիւն» խոստովանիլը, Որոտնեցու խիստ դատաստանը, Սարգսի նզովքի հետեւանքները պարզ ցոյց են տալիս, թէ Հայոց ընդդիմադիր տարրը, որին Սսեցիք սոնթ էին անուանում, ինչպէս էր նայում այն ժամանակի կեղծ ազատամիտ ազգակիցների վերայ, որոնք այդ Երասխի անողոք ալիքների զոհերն էին իսկապէս։

Խաւարեալ դարերի չարաբաստիկ կացութեան

արգասիք են այն միջոցները, որոնցով հալածում էին Յովհան Որոտնեցին և իւր հետևողներն իրենց ժամանակի մոլորութիւնը։ Անշուշտ ուր որ գիտակցութիւն կայ և գիտութեան պաշարը պակաս է, այնտեղ բնականաբար աւելի զօրաւոր ներգործութիւն ունին մարդուս կամքն և զգացմունքը. ուստի և համոզական խօսքերի փոխարէն հայհոյութիւնն է գործում, իսկ մտքի սխալները մտաւոր կարողութեամբ ուղղելու փոխարէն բռնութիւնն և անձի խոշտանգանքը։ Այսպէս էր և միարարական շարժումների դիմադրութեան բնաւորութիւնը։ Դարին յատուկ այդպիսի միջոցների կիրառութիւնից պարզապէս երևում է սակայն, որ ինքնապաշտպանութեան գաղափարը մեռած չէր Հայոց մէջ։ Եւ նոքա, թէև տկար, թէև անօգնական, թէև ամէն կողմից ծանր և անտանելի նեղութիւնների ենթակայ, սակայն միշտ աչքի առաջ ունէին իրենց ս. եկեղեցու անկախութեան գաղափարը և հնարաւոր միջոցներով մաքառում էին նորա թշնամիների դէմ։ Այս եղաւ ահա ԺԴ. դարում արևելեան Հայոց մէջ կազմակերպուած վանական դասի գործունէութեան գլխաւոր արդիւնքը։ Բայց նոքա միմիայն ճնշումներով չէին ձգտում իրենց նպատակին, այլ անդադար քարոզում և ուսուցանում էին ժողովրդին, ներշնչելով իրենց զգացմունքները, որոնք շատ անգամ տարօրինակ արտայայտութիւն են գտնում նորա խօսքերի մէջ, և վառում բորբոքում են ժողովրդի երևակայութիւնը։ Այդ երևում է զանազան տեսիլների և երազների նկարագրութիւնից, որոնցով լի են Թովմա Մեծոփեցու պատմութեան և յիշատակարանի էջերը։

Եթէ մի անգամ մտածենք, որ երազը քնած մարդու զառանցանքն է, եթէ աչքի առաջ ունենանք, որ երազի մէջ շատ անգամ երևում է առօրեայ կեանքի և մարդուս անհատական իղձերի պատկերը, եթէ ընդունենք, որ երազով մարդիկ շատ անգամ հասել են յայտնի ճշմարտութիւնների ծանօթութեան կամ լուսաբանութեան, այն ժամանակ Թովմա Մեծոփեցու պատմած երազների մէջ արդարև անդրադարձած պիտի տեսնենք այն ամէնն, ինչոր ԺԵ. դարի Հայոց մտածող դասին զբաղեցնում էր։ Ճշմարտութեան հակասած չենք լինիր, եթէ ասենք, որ այդ երազներն ընդունւում էին այն ժամանակի հասարակութեան մէջ իբրև գերբնական ցուցումներ, իբրև «յայտնութիւն ի վերուստ» և այդպիսով զարթեցնում էին մտքերը, լուսաւորում էին շատերին և ոգևորում էին յայտնի նպատակի համար։ Եւ որովհետև երազն, ինչպէս և լինի, միշտ կապ ունի մարդկային առօրեայ կեանքի հետ, ուստի և կարելի է ասել թէ Թովմա Մեծոփեցու պատմած երազների բովանդակութիւնից և պէտք է մակաբերել ԺԵ. դարի Հայոց առաջնորդներին զբաղեցնող հարցերի մասին։ Մենք արդէն տեսանք թէ ինչպէս մի երազի ազդեցութեան տակ Ստեփաննոս վարդապետը կարողացաւ շարժել Մեծն Սարգսին և Մաղաքիա Ճգնաւորին, որ իրենց աշակերտներին սանձեն և չետ դարձնեն մոլորութիւնից, համոզուած լինելով, թէ նոքա Երասխի յորձանքներին զոհ են եղել [19]։ Մի այլ տեղ Թովման պատմում է, որ Յովհաննէս Մեծոփեցին Արճիշու Ս. Աս-

[19]) Թում. Մեծոփ. 39.

տուածածնի վանքի շինութեան խորհուրդն յղացել է մի սքանչելի տեսիլի ազդեցութեամբ [20]), և իրեն կեանքի նպատակ ընտրելով այդ խորհուրդն իրագործելը, պատճառ է լինում այն նշանաւոր վանքի վերանորոգութեանն և պայծառութեանը, որ ԺԵ. դարում բազմաթիւ կրօնաւորների և վարդապետների պատըսպարան եղաւ և որից հանդէս եկաւ ինքը Թովմա Մեծոփեցին. այդ էր Մեծոփայ վանքը [21]). Թուելով Վաղարշապատի ժողովում մասնակցող վարդապետների անունները, Թովման իւր յիշատակարանի մէջ յիշում է, որ նոքա ամենքը «տեսիլների և երազների» միջոցով միաբանուած՝ եկան Վաղարշապատ և «Հոգոյն Սրբոյ ընտրութեամբ և ամենայն Հայկազեան գաւառի հաւանութեամբ» կաթուղիկոս դրին Կիրակոս Վիրապեցուն։ Ահա այս ընտրութեան մանրամասնութիւնն է որ պատմում է Թովման իւր յիշատակարանի մէջ, որտեղ պատմական բազմաթիւ պատճառաբանութիւնների հետ միասին տեսնում ենք մի կարգ տեսիլների և երազների նկարագրութիւն. նոցանից պարզ երևում է, որ այդ ժամանակ արդէն մտքերն ուղղուած էին դէպի Վաղարշապատի Մայր եկեղեցին Ս. Էջմիածինը, և հայրապետական աթոռի փոխադրութիւնը Սսից Էջմիածին արդէն մի անհրաժեշտ պահանջ էին համարում։ Ի՞նչն ստիպեց ԺԵ. դարի Հայերին բոլորովին երես դարձնել Սսից և դիմել դէպի Ս. Էջմիածին։ Ահա այն խնդիրը, որ կարօտ է մասնաւոր լուսաբանութեան, որպէսզի Թովմա Մեծոփեցու յիշատակարանն հասկանալի լինի։

[20]) Նոյն 34.
[21]) Նոյն 58, 59.

Դ.

ԺԵ. դարն Հայոց եկեղեցական պատմութեան խառնակ շրջաններից մէկն է։ Այդ ժամանակ արդէն վերջացել էր Կիլիկիոյ Հայոց թագաւորութիւնը. Սիս մայրաքաղաքն, ուր նստում էին Հայոց թագաւորն ու հայրապետը, արդէն անցել էր մահմետական բռնաւորների ձեռքը։ Նորա բնակիչներն արդէն մի քանի անգամ բազմաթիւ խմբերով գաղթել էին Կիպրոս կամ այլ ապահով տեղեր. նոցա հետևում էին միւս քաղաքների բնակիչները. թշնամի բռնաւորի ոտի տակ աւերակ էին դարձել ամբողջ երկրի քրիստոնէական հաստատութիւններն և այն։ Կիլիկիոյ մէջ հանդիպած այդ թշուառութիւններին ժամանակակից էին այն նեղութիւններն և հարուածները, որոնք կրեցին Հայաստանի բնակիչները Լանկթէմուրի արշաւանքի և նորա յաջորդների հարստահարութիւնների ժամանակ։ Ժողովուրդն այսպիսով հասաւ աղքատութեան և յուսահատութեան ծանր վիճակին, որի հետևանքն եղաւ և եկեղեցական դասի անկումն և նախկին եկեղեցական հաստատութիւնների խանդարումն։

Արտաքին քայքայման այս համատարած վտանգի հետ միասին Սսի կաթուղիկոսարանի բռնած վնասակար ուղղութեան շնորհիւ արդէն նախապատրաստուած էր և մի ներքին բարոյական քայքայումն. արդէն սկսել էր ընդհանրանալ Հայոց մէջ մտքերի շփոթութիւն. աւանդութիւնն ու նորաձևութիւնը, ազգայինն և օտարը, տեղականն և եկամուտը, կանոնն և կամայականութիւնը միանգամայն շփոթուել

էին այն ժամանակուայ Հայոց գաղափարների մէջ։ Սոնթերի դիմադրութիւնն աղթարմաներին միակ երևոյթն է ժամանակի պատմութեան մէջ, որ վկայում է վանական դասի արթնութեան մասին։ Սակայն կան և հակասական երևոյթներ, որոնց հանդէս գալն արդէն ցոյց է տալիս բարոյական քայքայման աստիճանը։ Այդ երևոյթների աղբիւրը դարձեալ Սսի կաթողիկոսարանն է։ Ահա թէ ինչպէս է պատկերացնում Թովմա Մեծոփեցին իւր յիշատակարանի մէջ այդ հակասական երևոյթների համառօտ շարքը։ Նորա ասելով, Սսի կաթուղիկոսները պահպանել էին իրենց մէջ Գրիգոր Անաւարզեցու և Կոստանդին Պրօնագործի ուղղութիւնը և չէին վայելում բնաւ ընդհանուրի վստահութիւնը. նոքա թագաւորութեան անկումից յետոյ գրեթէ անկարող էին միևնոյն տեղում մնայ. շատ անգամ շրջում էին Սսից դուրս իրենց գլուխը պահելու համար. նոքա իրենք մեծ մասով անբարոյական մարդիկ էին. և այդ պատճառով երկար չէին կարող մնալ աթոռի վերայ, երևի, շրջապատուած լինելով ևս առաւել անբարոյական մարդիկներով. մօտ յինսամեայ ժամանակում վեց կաթուղիկոս նստաւ Սսում և վեցին էլ թունաւորելով սպանեցին «բաղայս անուղղայս» դնելով նոցա վերայ. նոքա մեռոն չէին օրհնում, այլ հասարակ ձէթ էին բաժանում. ձեռնադրութիւններն անում էին շնորհավաճառութեամբ. ձեռնադրում էին նոցա, որոնք հարուստ էին, իսկ աղքատներին մերժում էին. այն կարգաւորները, որ իրենց խոստացած արծաթը չէին վճարում, իրենց կարգը գրաւ էին դնում նոցա մօտ. մէկ վիճակի վերայ 3—4 եպիսկոպոս էին ձեռնադրում,

որոնք իրենց վիճակին տէր էին դառնում այլազգի բռնաւորների ուժով։ Յակոբիկ ։ քրիստոնեաները, որոնք եպիսկոպոսական ձեռնադրութիւնը Հայոց կաթուղիկոսից էին ընդունում, այդ ամէնից զզուելով, հեռացան, և Խպտիներից էին առնում ձեռնադրութիւնը։ Կաթուղիկոսարանի նուիրակներն ու քարոզիչները նոյնն էին անում ինչոր և կաթուղիկոսները. անբարոյական զեղխ կեանքով շրջում էին ժողովրդի մէջ, և ժողովրդին «կապող ու արձակող» էին լինում. նոքա իրենց զօշաքաղութեամբ և վատթար ընթացքով շատերի ակամայ հաւատափոխութեանը պատճառ էին լինում։ Սովորական էր դարձել բանադրանք կարդալը. կաթուղիկոսն եպիսկոպոսին էր բանադրում, եպիսկոպոսը քահանային, քահանան ժողովրդին, և այդպիսի հոգեւոր կապանքների տակ հեծում կեղեքւում էր ժողովուրդն իւր հոգևոր հայրերից։

Այդ սարսափելի զեղծումների մէջ դեռ շատ զարմանալի է, որ արևելեան հայրերը կարողացած են պահպանել ժողովուրդ և եկեղեցի, և փոքր ի շատէ աչք ունենալ Սսի աթոռի բարեկեցութեան և արտօնութիւնների վերայ։ Այդպիսի մի բացառական երեւոյթ տեսնում ենք մենք 1409 թուին, երբ Գրիգոր Տաթևացին Աղթամարի կաթուղիկոսութիւնը ջնջելով, նորա վիճակը դարձնում է Սսի աթոռի իշխանութեան տակ և խնդրում է Յակոբ Գ. կաթուղիկոսից, որ այն վիճակի համար եպիսկոպոս ձեռնադրէ և մեռոն ուղարկէ։ Այս երևոյթը ցոյց է տալիս, որ արեւելեան հայրերն, ուզելով վերականգնել Հայոց հայրապետական աթոռը, նորա ոյժը տեսնում էին միապե-

տական զօրութեան մէջ, և ջնջելով մի հակաթոռ իշխանութիւն, արդէն ինքն ըստ ինքեան բաց էին անում ճանապարհն Հայոց հայրապետի առաջ՝ իւր աչքն արևելք ուղղելու և իւր կոչման իսկական բարձրութեան ձգտելու։ Բայց Յակոբ Գ. շատ կարճատև աննշան հովութիւն ունեցաւ. իսկ աղթամարցիք դարձեալ խռովեցան և, իրենց օգնական գտնելով արևելեան վարդապետների մի մասի համակրութիւնը, շուտով վերականգնեցին հակաթոռ հայրապետութիւնը։

Այնուհետև Սսի աթոռի ազդեցութիւնը ևս առաւել ընկաւ, որին մեծապէս նպաստեց Կոստանդին Ե. Վահկացու ձգտումը Հռովմայ եկեղեցու հետ միանալու։ 1439 թուին գումարուելու էր Իտալիայի Փլորէնտիա քաղաքում մի ընդհանուր ժողով եկեղեցիների միաբանութեան համար։ Հռովմայ պապն այդ ժողովին մասնակցելու հրաւէր ուղարկեց և Հայոց կաթուղիկոսին Կոստանդին Ե. Վահկացուն, որն հրաւէրն ստանալուց յետոյ 1435 թուին Երուսաղէմի սարկաւագ Աբդլմսեհին ուղարկեց իւր թղթով Ամիդ, որպէսզի այնտեղի առաջնորդ Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսի կարծիքն իմանայ այդ խնդրի մասին։ 1436 թուի մայիսի 15-ին Նաղաշ եպիսկոպոսը նոյն սարկաւագի ձեռքով մի թուղթ ուղարկեց կաթուղիկոսին և առաջարկեց՝ պահանջել յոյներից և լատիններից, որ նախ Քաղկեդոնի ժողովը մերժուի և ապա խորհին եկեղեցիների միաբանութեան վերայ։ Այդ ժամանակներում Կոստանդին Ե. մի թուղթ ստացաւ Թէոդոսիայի Սարգիս վարդապետից, որն այնտեղ կաթուղիկոսական փոխանորդ էր. նա պապի նուիրակի

դրդմամբ դիմեց կաթուղիկոսին, յորդորելով, որ նա եկեղեցիների միաբանութեան խնդիրն յառաջ տանի։ Կոստանդին Ե. Սարգսի թուղթն ստանալուց յետոյ 1438 յուլիսի 25-ին մի կոնդակ ուղարկեց և իրեն կողմից նշանակեց նորան ներկայացուցիչ Փլորէնտիոյ ժողովի մէջ։ Սարգիս վարդապետը միքանի վարդապետներով ուղևորուեցաւ Թէոդոսիայից Փլորէնտիա, ուր հասան նոքա այն ժամանակ, երբ ժողովը վերջացել էր և սկսել էին ցրուել։ Այնտեղ նոքա ներկայացան Հռովմայ պապին և երկար բանագնացութիւններից յետոյ ընդունեցին Փլորէնտիոյ ժողովի որոշումները, և պապի պարգևներով ու կոնդակով պերճացած վերադարձան Կիլիկիա 1440 թուին այն ժամանակ, երբ Կոստանդին Վահկացին արդէն վախճանել էր, և մէկ քահանայի շատ կարճատև ապօրինի կաթուղիկոսութիւնից յետոյ նոյն տարին աթոռի վերայ հաստատուել էր Գրիգոր Թ. Մուսաբէգեանցը [23]։

Այս ամէնին տեղեակ Հայոց արևելեան վարդապետները մի անգամ ընդմիշտ հայրապետական աթոռն այդպիսի պատահական շփոթութիւններից ազատելու և մանաւանդ միարարութեան խնդիրների առաջն առնելու համար արդէն պատրաստուել էին մի ազգային ժողով գումարելու և աթոռն Էջմիածին փոխադրելու։ Շատ կարճ ժամանակի մէջ այդ գլուխ եկաւ և այդպիսով խափանուեցաւ Փլորէնտիոյ ժողովի ընդունելութիւնն Հայոց մէջ։

[23]) Չամչեան Պատմ. Հայոց, Գ. 473.

Ե.

Ս. Էջմիածնի պատմական նշանակութեան մասին մինչև ԺԴ. դարը մենք արդէն մի անգամ՝ Ստեփաննոս Օրպէլեանի Ողբի մասին խօսելու ժամանակ՝ առիթ ունեցած ենք մեր հայեացքը պարզելու [24]։ Մեզ համար ակներև է, որ Հայոց այդ սրբավայրի անունն և յիշատակն հետզհետէ արծարծւում և ընդհանրանում է Հայոց մէջ այն պատմական երեւոյթների շնորհիւ, որոնք կապ ունին Հայոց հայրապետական աթոռի աստանդականութեան տխուր հանգամանքների հետ։ Այն ժամանակ, երբ Հռոմկլայում նստող հայրապետներն իրենց անուանում են կաթուղիկոս ամենայն Հայոց և ողջոյն ու խաղաղութիւն են ուղարկում «Ս. Լուսաւորչի աթոռից և աջից»[25], ԺԵ. դարի հայրապետներից ոմանք արդէն իրենց անուանում են «կաթուղիկոս ամենայն հայկազնեայց հանուրց և Վաղարշապատու» կամ «ողորմութեամբ Աստուծոյ կաթուղիկոս Վաղարշապատու» [26]։ 1300 թուից սկսած՝ Ստեփաննոս Օրպէլեանի բերանով արդէն շատերի ականջին լսելի էր լինում «Արարատ!» դաշտից գուժող բարձր ահագին ձայնը, որ շարունակ հնչում էր Հայոց լեռներում և հովիտներում։ Ամէն ոք այդ ձայնը լսելիս տեսնում էր

[24]) Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն, Թիֆլիզ 1885.

[25]) Տես Ընդհանրական Ն. Զնորհալւոյ.

[26]) Տես Զամչ. Պատմ. Հայոց, Գ. 456 և 475.

«Զմայրն լուսոյ Հայկայ զարմին
Մերկ խայտառակ ի բաթրոնին
Զանձամբ արկեալ գբուրձ խաւարին...
Զկուրծքն բախէր քարամբ ուժգին,
Առուք արեանց իջանէին,
Մոխիր կուտէր նման բլրին,
Ցանէր ձեռամբն ի գագաթին. . .»

և այս սգաղգեաց մօրը շրջապատող լալական կանայք, նորա դուստրները, նոյնպէս կոծում են և անմխիթար հառաչում։ Ահա լսելի են լինում և ողբի յուսահատական բացագանչութիւնները.

«Այս ես, այս ես Էջք Միածնին
Իմ Երկնաւոր թագաւորին,
Որ հարսնացեալս էի նմին
Ի յաշխարհիս Թորգոմածին,
Երբեմն էի որպէս զերկին,
Հիմ հաւասար եմ գոնեին.
Երբեմն արփի արևածին,
Այժմ խաւար անհնարին. . .»

Նա իրեն ողբակցելու է հրաւիրում երկնայիններին, յիշեցնելով, որ եթէ նոքա մի ոչխարի համար անհնարին սգի մէջ են ընկնում, ապա որքան աւելի պիտի տխրին այն անթիւ կորուստների համար, որ ունեցել է Հայոց սգաւոր մայրը Ս. Էջմիածին։ Նորա փառքը շատ աւելի պայծառ և ահեղ էր քան զգալի արեգակը.

«Գետք իմաստից չիս բղխէին
Նման Դիկլաթայ և Եփրատին,
Պայծառազարդ խրախանայի

Ես իմ մանկամբքն գեռածին. . .»
Բայց անցել էր արդէն այդ փառքը.
«Որպէս զտուերք այլ յերևին,
Նման երազոյ կարծեօք թուին,
Որպէս ծաղիկ ամարայնոյն
Արևակէզ թարշամեցին. . .»

Այն փառաւոր անցեալին յաջորդել էր մի թշուառ վիճակ, ինչպէս գազանն անապատում Հայոց այդ մայրը մէնակ մնացած է անբնակ դաշտի մէջ և աչքերը չորս կողմ ուղղած որոնում է իւր մխիթարութեան հաճելի առարկաները. նա հարցնում է յուսահատած ձայնով.

«Ո՞ւր են փեսայքն իմ առաջին
Հայրապետաց ջոկքն, որ անցին.
Ո՞ւր բաբունիքն, որ յիս կային,
Դասք երիցանց կղերիկոսին,
Ո՞ւր սարգաւագքն յիմ բաթրոնին...
Ո՞ւր ձայն երգոց պաշտօնէին,
Ո՞ւր և բուրմունք անուշ հոտին,
Ո՞ւր կանթեղունք լուցեալ ջահին
Նման աստեղացն որ ի յերկին. . .»

Ամայութիւնը, անբնակ դաշտի սարսափելի տպաւորութիւնը բազմավիշտ որդեկորոյս մօր աչքի առաջ ուրիշ ոչինչ չի երևցնում բայց միայն ողնիներ և ճագարներ.

«Կամ Սկիւթացի հօրանք Թուրքին։
«Կամ խայտառակ մանկունք նոցին...»

Տխուր ձայների այդ սրտաճմլիկ տպաւորութեան տակ հետզհետէ նախապատրաստւում են Հայոց մտքե-

րըն առաւելապէս այն պատճառով, որ Ս. Էջմիածինն իւր ողբը կնքում է սրտապնդող խօքերով։ Նա ասում է.

«Յուսահատիլ չէ պարտ բնաւին
Մեզ ի յուսոյ անմահ Բանին,
Որ ի քարանց անշնչային
Կանգնէ զորդիս Աբրահամին...»

Նա յորդորում է իւր զաւակներին աղօթել հանապազ, որ Աստուած վերջ դնէ նորա տառապանքին.

«Նոր զարդարէ փառօքն հին,
Եւս առաւել քան զոր էին,
Տայ մեզ գոչել ձայնիւ ուժգին
«Վերջինս է մեծ քան զառաջին [27])»։

Եւ չէր սխալւում Հայոց վշտացեալ մայրը Ս. Էջմիածին։ Անցան երկար տարիներ, տեղի ունեցան բազմատեսակ դառն հարուածներ. ներքին քայքայումը կարծես վերջ պիտի դնէր Հայոց գոյութեանն։ և ահա մի խումբ կրօնաւորներ Վանայ ծովի ափերից ջերմ սրտով և արագ քայլերով սլանում են դէպի Ծերունի Մասիսի ստորոտները։ Նոքա իրենց հետ բերում են «ծեր ծնողին» մխիթարելու հաստատուն խորհուրդներ։ Արդէն նոքա ներշնչուած են ի վերուստ։ Մէկը նոցանից, որ յառաջ իւր ընկերներին համոզում էր Աղթամարի կաթուղիկոսին հնազանդելու, եկեղեցու դրանը քնած ժամանակ արդէն տեսիլքի մէջ տեսել էր Ս. Գրիգոր Լուսաւորչին, որն իւր աջը դնելով նորա գլխին, պատուիրել էր, թէ «Գնա,

[27]) Տես Սա. Օրպէլ. Ողբ։

մեր վարդապետներին ասա, որ գան, Միածին Որդու փառաց տաճարը Ս. Էջմիածինը նորոգեն»։ Երկրորդն արդէն տեսել էր երազի մէջ, որ մի Ծիածան կապուեցաւ Հայոց երկրի չորս կողմը, և լոյս տուեց. և ձայն եկաւ երկնքից, թէ «Սկիզբն եղև ազգիս նորոգման։» Երրորդը տեսել էր իւր ընկերին Ս. Էջմիածնի բեմում նստած. «նորա գոգը վարդով լցուած էր. բոլոր Հայոց ազգը գալիս այն վարդից առնում էր, և վարդն էլի չէր հատնում». այդ նշան էր, որ Հայոց մեռոնն անսպառելի տարածուելու էր ամբողջ ազգի մէջ [28]։

Զգացմունքների այսպիսի արտայայտութեամբ Վաղարշապատ դիմող կրօնաւորներն երևցնում են իրենց գիտակցական ձգտումը Հայոց Մայր եկեղեցու դարաւոր սուգը փարատելու, որովհետև նորա մէջ էր մարմնացած ամբողջ ազգի գոյութեան և նորոգութեան գաղափարը։ Նոցա այդ գիտակցութեան աւելի մեծ զարկ տուած էին անշուշտ և ժամանակի հանգամանքները։ Գրիգոր Թ. իւր կաթողիկոսանալու հէնց առաջին օրերում եօթը նոր եպիսկոպոս ձեռնադրեց, և ինքը, որովհետև մաքուր անուան տէր չէր, չկարողացաւ սանձել աններելի գեղծումները, որ տեղի ունեցան նորա հայ ապետութեան ժամանակ։ Կիլիկիոյ եպիսկոպոսներից մի քանիսը նամակներ ուղարկեցին արևելք և բողոքեցին իրենց տխուր կացութեան մասին։ Նամակներից մէկն հասաւ և Թովմա Մեծոփեցուն։ Արևելքի վարդապետները և եպիս-

[28]) Տես Թովմ. Մեծոփ. Յիշատակարանը։
[29]) Շամչեան, Պատմ. Դ. 485.

կոպոսները գրով և խօսքով բանակցում և համաձայնում են իրար մէջ՝ աթոռը Վաղարշապատ փոխադրելու [29]։ Կաթուղիկոսի ընտրութեան և հաստատութեան համար այն ժամանակներում անհրաժեշտ հարկաւոր էր արևելքի չորս աթոռների՝ Արտազի, Տաթևի, Ռջնու և Հաղբատի արքեպիսկոպոսների հաւանութիւնը։ Սակայն 1440 թուին վարդապետների մէջ աւագութեամբ և ազդեցութեամբ ամէնից նշանաւորն էր Հերմոնի վանքի մեծ վարժապետն Յոհան Կոլոտիկ, որն և առաջնորդ եղաւ բոլոր միւս վարդապետներին և իւր կողմից հաւանութիւն տալով, հրաւիրեց ամէնքին ժողովուելու և խորհուրդ անելու։ Բանակցելով «Արարատեան» երկրի իշխանի Աղուպէկի հետ, հրաման առան նորանից՝ գումարուելու Վաղարշապատ և կաթողիկոսական ընտրութիւնը կատարելու։ Թովմա Մեծոփեցին և Վասպուրականի միւս վարդապետները Յոհան Կոլոտիկի հրաւէրին հետեւելով, ճամապարում են Երևան՝ այնտեղից Վաղարշապատ դիմելու և իրենց բաղձալի խորհուրդն իրագործելու համար։

Հայաստանի զանազան կողմերից Վաղարշապատ ժողովուած վարդապետների, եպիսկոպոսների, կրօնաւորների և քահանաների թիւը, Թովմայի ասելով, երեք հարիւրից աւելի էր։ Նոցա հետ կային և «ազատք, և որդիք ազատաց, ձեռնաւորք և տանուտէրք, ՈՒՂԻՒ և ՈՒՀՈՍՈՒ բազմութիւն ժողովրդեան արանց և կանանց»։ Ներկայ գտնուողներից զատ ժողովին մասնակցեցին և բացակայ վարդապետներ և եպիսկոպոսներ, որոնցից քսանի անունը մի առ մի յիշում է Թովման։ Նոքա իրենց հաւանութիւնն յայտ-

նել էին ժողովին գրով։ Ընտրութիւնն եղաւ այսպէս. նախ՝ շատերին առաջարկուեցաւ Հայոց առաջնորդ լինելու, բայց նոքա չկամեցան «բառնալ զծանրութիւն դառնութեան բարձրագոյն աստիճանին», ապա ամէնքն ապաւինելով աղօթքի, խնդրեցին, որ Աստուած ընտրէ Հայոց առաջնորդ։ Այդպիսի ընտրութեան համար բաւական ժամանակ են նուիրել ժողովականները. այդ երևում է նորանից, որ Թովման դարձեալ պատմում է միջանկեալ տեսիլներ և երազներ, որոնք իբր թէ պէտք է մատնացոյց անէին իրենց ընտրելի անձի վերայ։ Մինչև անգամ ոմանք կարողանում են այդ միջոցում ուխտ դնալ Օշական, Ս. Մեսրովբի գերեզմանին մատաղ անել և նուէրներ մատուցանել, որպէսզի իրենց ձեռնարկութիւնն յաջողի։ Թէև Թովման չի չիշատակում, սակայն հեշտ է այդ հանգամանքներից մակաբերել, որ հէնց այդ ժամանակամիջոցում եղաւ ժողովի կողմից բանակցութիւն Գրիգոր Թ. Մուսաբէգեանցի հետ, որին հրաւիրեցին գալ Ս. Էջմիածին և այնտեղ շարունակել իւր կաթուղիկոսութիւնը [30]։ Մինչև հրաւիրակի գնալն և վերադառնալը, և ժողովի հաւաստի լինելը, որ Գրիգոր Թ. մերժում է նոցա առաջարկութիւնը, անշուշտ, սէտք կը լինէր, եթէ ոչ ամիսներ, գէթ մի քանի շաբաթ ժամանակ։ Այդ մի շատ տագնապալից միջոց էր ժողովականների համար. սպասողական վիճակը, ոմանց տատանուելը, Գրիգոր Մուսաբէգեանցի պատասխանի նկատմամբ ենթադրութիւններն և այլն կարող էին, ի հարկէ, տեղիք տալ այն երազներին ու

[30] Զամ. Պատմ. Հայոց, Գ- 486.

տեսիլներին, որ պատմում է Թովման այդ ժամանակամիջոցի նկատմամբ։ Վերջին երազը, որ աւետում էր վերջապէս Աստուծոյ ողորմութեան մասին, այսպէս է պատմում Թովման. «մի աստուածապաշտ մարդ եկաւ, ասում է, և ասաց թէ տեսայ, որ մի կանթեղ կախուեցաւ երկնքից և պայծառ լոյս տարածեց բոլոր երկրիս մէջ. ես հարցուցի թէ այդ ո՞ւմ կանթեղն է. մի մարդ ինձ ասաց, որ այս կանթեղն Ս. Էջմիածնինն է, որ, շատ վաղուց է, խաւարել էր, և հիմայ Աստուած ողորմութիւն արաւ և ուզում է լուսաւորել»։

Վերջին օրն, երբ ժողովը գումարուեցաւ, Սուրբ Աւետարանով վիճակ ձգեցին, և վիճակն եկաւ Կիրակոս վարդապետին, որը թէև «շատ անհնազանդ բարք ունէր և երկրաւոր փառքն ատում էր, ասում է Թովման, բայց առանց հակառակութեան եկաւ կանգնեցաւ ահագին ատենում»։ Անմիջապէս սկսեցին ձեռնադրութիւնը։

Զ.

Կիրակոս վարդապետը մի ճգնաւոր մարդ էր։ Թովմայի ասելով, նա Քաջբերունեաց գաւառի Խառաբաստայ գիւղից էր և աշակերտել էր Սարգիս և Վարդան մեծ վարդապետներին. քահանայ էր ձեռնադրուել 1397 թուին Արտազու Ս. Թադէի վանքում. այն օրից մինչև 1441 թիւը, երբ նա կաթուղիկոս ձեռնադրուեցաւ, «ոչ միս էր ճաշակեալ և ոչ գինի ըմպեալ և ոչ կիթ անասնոց կերեալ». 1409

թուին իւր գաւառից հեռացաւ և բնակեցաւ Խոր Վիրապի վանքում, ուստի և կոչուեցաւ Վիրապեցի։ Նորա վարքի սրբութեան վերայ մեծ յաւիշտակութեամբ է խօսում Թովման. մինչև անգամ նորա թշնամիներն էլ նորա համար ասում էին, թէ «ճգնութեամբ՝ Լուսաւորչին հանգոյն է»։

Անհասկանալի է իսկապէս թէ ինչ հանգամանք առաւելապէս պատճառ եղաւ, որ Կիրակոս Վիրապեցուն ընտրողների մի մասն երկու տարի յետոյ թշնամացան և նորան հրաժարեցուցին աթոռից։ Դրժուար թէ նորա կառավարութեան վատութիւնը լինէր այդ երևոյթի պատճառը։ Թովման ասում է, որ նորա կաթուղիկոսութեան ժամանակ երևցաւ, որ «Հայոց ազգը բարութեամբ լցուած ու շնորհներով զարդարուած է, այնպէս որ բոլոր շրջակայ այլազգիք և հաւատացեալներն, ասում է, երանի էին տալիս մեզ». սորանից հետևում է որ, եթէ Թովման կողմնապահութիւն չի անում, Կիրակոսի կարճատև կաթուղիկոսութիւնն արդիւնաւոր է եղել բարոյապէս և նիւթապէս. «աստուածապաշտ ազգս հայկազեան, ասում է, Արարատեան և Վասպուրական աշխարհի ժողովուրդը մարմնաւոր պիտոյքներով լցեց Ս. Աթոռը»։ Կիրակոսի շնորհիւ աղթարմայութիւնը ջնջուեցաւ, շնորհավաճառութիւնը դադարեցաւ, բանադրանքներն ու նզովքները ոչնչացան։ Ժամանակի կարճութիւնը չխանգարեց բնաւ այդ սկզբունքները հանդէս բերելու և իրագործելու։ Իսկ աւելին սպասել անկարելի էր։

Վիրապեցու անկման պատմութիւնն անելիս Թովման չի կարող անտարբեր խօսել նորա նախապատճառների վերայ, որոնց նա սաստիկ մեղադրում

է։ Քանի որ այլ աղբիւրներ չունինք նոյն խնդրի ուսումնասիրութեան համար, անշուշտ, միակողմանի կը լինի որ և իցէ եզրակացութիւն անել։ Թերևս Վիրապեցու ոսոխները հակառակ ուղղութեան անձինք էին և ոչ այնքան անձնական ատելութեան գործ կատարեցին, որքան յայտնի ուղղութիւն տապալելու համար հանդէս եկան։ Նոքա չէին համակրում Աղթամարի կաթուղիկոսութիւնը վաւերացնելու և նորա վերայի բանադրանքը վերցնելու գաղափարին։ Նոքա չէին կարող մոռանալ իրենց մէջ արմատացած մոլութիւնները, որոնց դէմ զինուած էին Կիրակոս և իրեն հետևողները։ Նոքա այնքան կրքոտ էին միևնոյն ժամանակ, որ չէին ամաչում իրենց գործ դրած ստոր միջոցներից հակառակորդներին զուր զրպարտելու։

Այդ ամէնն երևում է Թովմայի յիշատակարանից։ Զորօրինակ՝ նոքա Վիրապեցու վերայ ուրիշ ոչ մի յանցանք չէին գտնում բացի այն, որ նա Աղթամարի կողմերից էր, որ նա կաթուղիկոս ընտրուելու ժամանակ տակաւին վարդապետ էր. էլ չյիշենք այն, որ նոքա ամբաստանեցին Վիրապեցուն Աղուպպէկի առաջ, որ նա մինչև անգամ մկրտուած էլ չէ։ Նոքա այն էլ էին ասում թէ Կիրակոսին ձեռնադրողը Թովման և իրեն ընկերներն էին և թէ իրենք մասնակից էլ չեն եղել։ Այս ամէն ամբաստանութիւնները չզօրեցին սակայն Աղուպպէկին համոզելու. այնպէս որ զրպարտիչներն ի վերջոյ «անթիւ և անհամար արծաթ» խոստացան Աղուպպէկին և այդպիսով կորզեցին նորա հաւանութիւնը Վիրապեցու փոխարէն Գրիգոր Մակուեցուն ձեռնադրելու։

Թէպէտև Կիրակոս Վիրապեցին ապօրինի զբրկուեցաւ աթոռից, սակայն Հայոց հայրապետութիւնը մինչև օրս անընդհատ յաջորդութեամբ յարատևեց Ս. Էջմիածնում իբրև ազգային եկեղեցական վարչութեան միակ օրինաւոր ծայրագոյն հաստատութիւն, իսկ Սսի կաթուղիկոսարանը, որ սկսեց իւր գոյութիւնն աղթարմայութեամբ, իւր վերնանը գտաւ Գրիգոր Թ. Մուսաբէգեանցի ընբռստութեամբ ընդհանուր ազգային եկեղեցական ժողովի կանոնաւոր որոշման դէմ և շարունակում է տակաւին իւր ապօրինի գոյութիւնը մինչև օրս իբրև «մի կարգաւորեալ անիշխանութիւն», ինչպէս սրամտութեամբ անուանեց այդ մեր ժամանակի նշանաւոր Հայերից մէկը [31]։

Է.

1441 թուից յետոյ դարեր անցան։ Պէտպէս աղէտներ ու փորձութիւններ տեղացին Հայ ժողովրդի գլխին։ Զատ ձախող հանգամանքներ տեղի ունեցան Ս. Էջմիածնի կաթուղիկոսարանում։ Սակայն մազի չափ չվնասեցաւ Հայոց լուսաւորութեան մօր Ս. Էջմիածնի գոյութեան հիմքը։ Նորա հարազատութեան և անփոփոխ ժողովրդականութեան ամենալաւ նշանն է այդ։

Սիսը խորթ ճանաչուեցաւ, ինչպէս և էր, և մինչև անգամ բոլորովին մոռացուեցաւ։ Աղթամարն ինչպէս կար աննշան, այնպէս էլ մնաց իբրև մի տե-

[31]) Իզմիրլեան Մատթ. եպիսկոպոսի Հայրապետութիւն Հայոց եր. 817.

ղական վանահայրութիւն։ Աղուանից կամ Գանձասարու աթոռը, որ մի նախնական օրինաւոր հաստատութիւն էր, վնասակար ճանաչուեցաւ և 1815 թուին բոլորովին ջնջուեցաւ առանց մէկին ցաւ պատճառելու։ Միայն Ս. Էջմիածինն է, որ իւր բազմակողմանի աղէտալի անցեալի մէջ սուրբ և անարատ մնաց իբրև հարազատ մայր իւր հարազատ զաւակների սիրովը մխիթարուած։

Ս. Էջմիածնի անունը փարելի է եղել միշտ և ամէն կողմի Հայոց մէջ։ Դեռ ԺԷ. դարում Ասպահանի Հայերն իրենց գաղթականութեան ոսկեձեղուն ապարանների մէջ իրենց անմխիթար և թշուառ էին ճանաչում առանց Ս. Էջմիածնի և ամէն բանից աւելի նորա կարօտն էին քաշում։ Լեհաստանի Հայոց մնացորդների մէջ դեռ այսօր էլ կան բոլորովին օտարացած Հայեր, որոնք հայրենական ամէն բանը մոռացել են և հին նախնիքների յիշատակներից միմիայն Ս. Էջմիածնի անունն են յիշում. Լէմբէրգի լատին կուսանոցի հայազգի ծագումն ունեցող մայրապետն Թոզալի Կայտաննա (Վարդուհի) Սարգիսովիչն իւր քրոջ հետ միասին 1874 թուին սաստիկ զգածուեցաւ Ս. Էջմիածնի վարդապետ տեսնելիս և նորա բերանից Ս. Էջմիածնի անունն լսելով «ա՜խ, ասաց, գիտեմ Էջմիածին, Լուսաւորչի տեղը» [32]։ Մեր ժամանակակից ժողովրդական աշուղները խօսք չեն գտնում իրենց բարեպաշտական ջերմ զգացմունքներն յայտնելու դէպի Ս. Էջմիածինը [33]։ Աշուղ Աղագիւլն

[32]) Արևել. Մամուլ 1874.

[33]) Նոր քնար, եր. 16, 21. Քնար. Հայկ, 211.

իւր նահապետական սազով տեսէք ինչպիսի անձուկ է ներշնչում փբրև յայտարար ժողովրդական զգացմունքների.

«Գիշեր ցերեկ խասրաթը կուքաշեմ
Նասիբ ըլի տեսնամ Սուրբ Էջմիածին,
Քո խասրաթէն կուլամ, արտսուք կը թափեմ,
Նասիբ ըլի տեսնամ Սուրբ Էջմիածին...
Վավ որ զսա կուկանչի ընտարը եար ի,
Ուխտ անեմ խամբուրեմ Սուրբ Էջմիածին։»

Եւ այդ կարօտն ու սէրը ոչ ոք այնպէս ջերմ ու խորը չի զգում ինչպէս Հայ ժողովուրդը։ 1827 թուին Ներսէս Աշտարակեցու սուրհանդակն Ասլանեան Յովհաննէսը Ռուսաց բանակից Էջմիածին գնալիս ճանապարհին ընկաւ Պարսիկների ձեռքը. նոքա անասելի տանջանքներով բռնադատեցին խոշտանգելուն՝ իրեն յանձնուած գաղտնիքն յայտնելու. դահիճները նորա աչքը հանեցին, քիթը կտրեցին, բայց չկարողացան նորա գաղտնիքը խլել. նա անդադար պնդում էր, որ իրեն յանձնուած գաղտնիքը պարտական է միմիայն Ս. Էջմիածնին յայտնել։ Գաղտնիքն Էջմիածնին յայտնելու հնարաւորութիւնից զրկելու համար դահիճները կտրեցին և նորա լեզուն և թողին նորան ամայի դաշտում ընկած. ազնիւ երիտասարդն հէնց որ ուշքի եկաւ, թէև արիւնաթաթախ, թէև տանջուած և ջախջախուած, սակայն սողալով սողոսկելով հասաւ Ս. Էջմիածին և թէև անլեզու, սակայն մի կերպ հասկացուց ինչ որ իրեն յանձնուած էր։ Վհատեալ միաբանութիւնը ոգի առաւ և դիմաւորելով Ռուսաց զօրքերին, ցնծութեամբ տօնեց խաչի

յաղթանակը, որ եղաւ ապրիլի 13-ին [34]։

Հարկ չկայ մի առ մի յիշելու այսպիսի օրինակները։ Նոքա ապացուցանում են, որ Հայ ազգը գոյքով և կեանքով միշտ պատրաստ է Ս. Էջմիածնի գոյութիւնը պահպանելու և նորա սրբութեան ու ապահովութեան մէջ է տեսել իւր երջանկութիւնը։

Մեզ համար պարզ է, որ Ս. Էջմիածնի նշանակութիւնը բնաւ կախում չունի անձինքներից և ժամանակաւոր հանգամանքներից։ Անձինքն և հանգամանքներն այնպէս չեն կարող խախտել նորա հիմքը ինչպէս փոփոխական ուղղութիւնը և, եթէ կարելի է ասել, ժամանակի հանգամանքներին հաճոյանալու ձգտումը։ Ս. Էջմիածինն իւր նուիրական բարձրութեանն հասել է իւր մէջ մշտապէս թագաւորող ուղղութեան շնորհիւ. մենք կ'ասէինք որ այդ ուղղութիւնը կատարեալ մայրական է։ Ինչպէս որ մայրը խտրութիւն չի դնում իւր զաւակների մէջ, և միշտ իւր բնական սիրովն ու գորովովը հաւասարապէս խնամում ու փայփայում է նոցա, այնպէս էլ եղել է և Ս. Էջմիածինը՝ Հայոց եկեղեցիների մայրը և մեր լուսաւորութեան ընդհանուր ծնողը։ Նա ապրել է իւր զաւակների համար և մխիթարուել է միմիայն իւր զաւակներով. նա է եղել ազգի բոլոր դասակարգերի միակ հոգևոր ուղեցոյցն և առաջնորդը, որին սիրով և յօժարութեամբ անպայման հետևել են ամէնքը, որպէսզի իրենց ազգային գոյութեան հիմունքը, որ պահուած են Ս. Եկեղեցու հաստատութեան մէջ, մնան անաղարտ և անդրդուելի։

[34]) Տես Потто, Кавказская война.

Այն օրից, երբ Ս. Էջմիածինը թողած իւր այդ մայրական կոչումը կրհետևի Սսի կաթողիկոսարանի շաւիղներին, և կ'ընտրէ մասնաւոր, այսպէս ասենք՝ Խորթ մօր, ուղղութիւն, այն օրից, երբ Հայոց մայր լինելուց դադարելով, Ս. Էջմիածինը կրծառայէ կուսակցական շահերի, այն օրից և բնականաբար կըսկսուի նորա օրհասական անկումը, ինչպէս եղաւ այդ Սսուն։

Կ. Կ.

16 Ապրիլի 1892 թ.
Վաղարշապատ։

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ԹՈՎՄԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Ա. ՎԱՍՆ Ս ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆՆ.

'Ի պղ. (890) Թուականիս մեր ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ, հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ, միաբանութեամբ ամենայն Հայոց եղին[1] կաթուղիկոս ի սուրբ Էջմիածինն զսքանչելի և զփառաւոր այրն Աստուծոյ զտէր Կիրակոս պատրիարք և Հայրապետ ամենայն Հայոց։

Եւ այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք. Յովհաննէս վարժապետ և ուսուցիչ 'ի սուրբ ուխտէն Հերմոնի վանից և աշակերտք իւր Դաւիթ վարդապետ և Ստեփաննոս վարդապետ ի տանէն Սիւնեաց բաղում քահանայիւք. Զմաւոն վարդապետ շնորհալից աթոռոյն Ստաթէի առաքելոյ. Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս 'ի սուրբ առաքելոյն Թադէոսի.

և միւս Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս 'ի Հռչակաւոր ուխտէն Հաղբատու. իսկ ի յԱրարատեան գաւառէն Կիրակոս վարդապետ Ոբշտունեցի, Սարգիս վարդապետ Ձագավանեցի [2], Տիրացու վարդապետ Վանանդեցի Սիւնեաց. և ի կողմանէ Վասպուրական գաւառէ Թովմա [3] վարդապետ և Մկրտիչ վարդապետ ի սուրբ ուխտէն Մեծոփայ վանուց, Կարապետ վարդապետ և Յովսէփ վարդապետ 'ի մայրաքաղաք վանորէիցն ի սուրբ ուխտէն Աստուածածնին Խառաբաստու, Ղազար վարդապետ ամենայն կողմանն Բաղիշու, Ստեփաննոս վարդապետ և Յովհաննէս վարդապետ Արծկէու, Զաքարէ վարդապետ Վարագայ մայրաքաղաք վանորէիցն, և տէր Յովհաննէսն. և երկոտասան եպիսկոպոս աստի և անտի. տէր Զաքարէն Հաւուցթառայ ի յաղատորդեաց, տէր Գաբրիէլ 'ի սուրբ Էջմիածնէն, տէր Կարապետ Յոհաննուվանից, տէր Յովհաննէս Բջնու, տէր Անտոն 'ի Վիրապէն, տէր Յոհաննէս Արճիշու Մեծոփայ վանից, տէր Յակոբ Կողբայ, տէր Մկրտիչ Բագրանու, տէր Մարտիրոս Հաղբատու, տէր Ազարիա 'ի Գանձասարու, տէր Զաքարէ Նորավանից, տէր Ստեփաննոս տեղապահ Սիւնեաց աթոռոյն ի յաղատաց. տէր Կիրակոս Սալնապատայ. և այլ բազում վանորայք և կրօնաւոր սուրբ հարք և

պատուական երիցունք աւելի քան զերեք հարիւր անձինս և բազում միայնակեացք. և ազատք և որդիք ազատաց ձեռնաւորք և տանուտէրք. և անթիւ և անհամար բազմութիւն ժողովրդեան՝ արանց և կանանց։

Եւ ի հեռաւոր վարդապետաց և եպիսկոպոսաց թղթով միաբանեալ ընդ մեզ Աւետիս վարդապետ Սուրբխաչեցի, Յովհաննէս վարդապետ Աղարանեցի, Յովհաննէս վարդապետ Գամաղիէլու, Կարապետ վարդապետ Հիղնայ, Յովհաննէս վարդապետ Բարիձորոյ, և միւս Յովհաննէս վարդապետ Գամաղելայ, և Դաւիթ եպիսկոպոս, և Սահակ, տէր Ստեփաննոս եպիսկոպոս Բաղիշու, և տէր Բարսեղ, և տէր Աւետիս եպիսկոպոս, տէր Յովսէփ, տէր Գրիգոր, տէր Թորոս գերահռչակ ուխտին Սուրբ Կարապետին, տէր Պօղոս և տէր Զաքարէ սուրբ ուխտին Առաքելոց, տէր Կիրակոս Վանադրին (Վանդրին), տէր Յովհաննէս Սասնոյ, տէր Յովհաննէս մեծահանդէս ուխտին Վարագայ և տէր Կիրակոս սուրբ ուխտին Սալնապատայ [4]։

Այսոքիկ ամենեքեան միաբանութեամբ և ընտրութեամբ հոգւոյն Սրբոյ, տեսլեամբ գիշերոյ և յանուրջս երազոյ, հաւանութեամբ ամենայն հայկազեան գաւառի, աղօթիւք և բարեխօսութեամբ, ամենայն սրբոց եդաք հայրապետ

և կաթուղիկոս առաքելական աթոռոյն Թադէոսի և Բարթուղիմէոսի և Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի զտէր Կիրակոս Վիրապեցին, այր սուրբ և ընտրեալ. զի 'ի պիղ. (1397) թուականէն, որ ձեռնադրեցաւ քահանայ ի տէր Պօղոս[5] եպիսկոպոսէ 'ի Սուրբ Առաքելոյն Թադէոսի և ի տէր Զաքէոս եպիսկոպոսէ Խառաբաստայ Քաջբերունեաց, մինչ ի պղ. (1441) թուականն ոչ միս էր ճաշակեալ և ոչ գինի ըմպեալ և ոչ կիթ անասնոց կերեալ, գովելի և առաքինի սրբութեամբ սնեալ, սրբաբերան, հեզ և խոնարհ, ոչ նզովք և ոչ անէծք ի բերանոյն ելեալ, գոլով 'ի գաւառէն Քաջբերունեաց ի գեղջէն Խառաբաստայ յաշակերտաց մեծ վարժապետացն Սարգսի և Վարդանայ, որ ոչ գոյր ի վերջին ժամանակիս նման նոցա յորդիս Ադամայ սուրբ և առաքելական կանոնացն քարոզող և հետևող. երեսուներկու ամաւ յառաջ ելեալ ի գաւառէն իւրմէ, եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն և կենդանաթաղ գերեզման Լուսաւորչին ի Վիրապն, և անտի առանձնացեալ 'ի յանապատն Վանստայ[6] և այժմ ընտրութեամբ և Հոգւոյն Ստուծոյ կոչմամբ եդաք ի յաստիճան Հայրապետութեան, ըստ իմաստնոյն Սողոմոնի «զփառս և զպատիւս իմաստունքն ժառանգեն»։

Եւ թէ վասն զինչ պատճառի եղեալ եղև

կաթուղիկոս ի Վաղարշապատ քաղաքի ի սուրբ Էջմիածինն, որ Վարդգէս և Նոր Քաղաք կոչի։

Առաջին պատճառ, զի ապականեցաւ կարգ և կանոնք սուրբ հարցն մերոց ի Կիլիկեցւոց առաջնորդացն, որ յամեալ եղև կաթուղիկոսութիւնն նոցա ճխէ. (147) ամ սահմանեալ ի յառաջին թագաւորաց Կիլիկեցւոց. մանաւանդ զի մնացեալ էր խմոր աղթարմութեանն Կոստանդեայ և Գրիգորի Անաւարզեցւոյ, քաղկեդոնական գոլով. զի զկաթուղիկոսս և զեպիսկոպոս, անկեալս ի կարգէ գարշութեամբ վաւաշոտ բղջախոհութեան, ի յաստիճան առաքելական կոչէին։

Երկրորդ պատճառ, զի զառաջնորդն կենաց առանց խղճի մտաց սպանանէին. որ և ի պիղա. (1392) թուականէն մինչև ի մեզ վեց կաթուղիկոս եդին, և վեցին[7] դեղ մահու արբուցին և ի կենաց աստի հանին, բաղայս անուղղայս դնելով ի վերայ նոցին. զոր մի՛ խօսեսցի բերան իմ զգործս նոցին։

Երրորդ, զի նուիրակք և խրատատուք նոցա եպիսկոպոսք գայթակղութեամբ զբազումս 'ի հաւատոցն Քրիստոսի ի բաց հանին և անհաւատ արարին. որպէս յայտ է տեսանել ի Նիկիտայ քաղաք. զի զՅակոբ անուն տանուտէր մի ընտանեօք իւրովք ասեն թէ քսան

ֆլօրի կորեաւ և զայն դու առեալ ունիս. և երդումն ետուն, և ոչ հաւատացին. և երթեալ առ կաթուղիկոսն իւրեանց, անէծս յղեցին և նա բարկացեալ գնաց առ անօրէնքն և ել ի հաւատոցն. և ի ժամ մահուն աղաղակէր և ասէր. Տէր Յիսուս, զհաւատս իմ ի տէր Կոստանդինէ խնդրեա՛ և ի բոլք անկեալ պիղծ Ղազար նուիրակէն [8]։

Չորրորդ, զի անառակութեամբ և արբեցութեամբ և պիղծ վարուք շրջէին, և ինքեանք կապող և արձակող նստէին Հայոց։

Հինգերորդ, զի փոխանակ աստուածագործակ մեռոնին հասարակ ձիթապտղի ձիթով զՀոգին Աստուած յազգէս Հայոց ի բաց բարձին։

Վեցերորդ, զի սիմոնական արարին զամենայն ազգս Հայոց և նախատինք ամենայն ազգաց, զի արծաթով տային ըշնորհս Հոգւոյն Սրբոյ, և զայս օրէնք գիտէին։ Յորմէ ուսոյց Տէրն առաքելոցն. Զրի առէ՛ք և ձրի տո՛ւք. և առաքեալն Պետրոս սաստեաց կախարդին Սիմոնի. Արծաթ քո ընդ քեզ ի կորուստ լիցի, ընչի՞ւք ստանաս զշնորհս Հոգւոյն Սրբոյ։ Եւ զայս լսելով և տեսանելով ամենայն ազգաց քրիստոնէից, զմեզ յոյժ նախատէին։ Եւ ուղղաւան ազգն Յակոբեաց ի մեր կաթուղիկոսացն առնուին [9] զձեռնադրութիւնն, և զայլ թակղեցան.

ի մէնջ [10] գնացեալք յԵգիպտոս և առին զիշխանութիւն կաթուղիկոսութեան ի Խպտի ազգէն։

Երթներորդ, ի վերայ միոյ վիճակի երեք և չորս եպիսկոպոս ձեռնադրէին. և նոքա ի վերայ միմեանց յարուցեալ, զանօրէնս և զանհաւատս և զսուտ քրիստոնեայս բարեկամս արարեալ, զայլթակղութեամբ զաշխարհս մեր կործանեցին, որպէս յայտ է իմաստնոցն։

Ութերորդ, զանուղղայս և զանկարգս ձեռնադրէին, տեարք [11] գոլով ընչից, և զաղքատս խոտէին։ Որ և ՝ի միոյ եպիսկոպոսէ հազար երեսուն (ռլ.) ֆիօլի [12] առին, և ապա ետուն զայն կարգ. և նոքա, որ ոչ կարէին տալ, զկարգ եպիսկոպոսութեանն գրաւ առնուին [13]։

Իններորդ, զի անիծիւք նզովից և բանադրութեամբ [14] կապանաց զաշխարհս մեր լցին. կաթուղիկոսն զեպիսկոպոսսն, եպիսկոպոսն զքահանայսն, քահանայն զժողովուրդն, զոր Քրիստոս Աստուած օրհնութեան աղբիւրն չարչարանօք խաչի և մահու ազատեաց յանիծիցն Ադամայ և յանիծիցն օրինացն Մովսիսի, նոքա վասն արծաթասիրութեանն վերստին նորոգեցին զանէծքն նախաստեղծին և նոր դժոխք շինեցին ամենայն հայկազեան սեռի։ Զի [15] Լուսաւորիչն մեր և քաջ սպառազէնն Աթանասիոս ասէ [16] ի գիրս կանոնին. Որ զմարդ անիծանէ և նզովէ,

ի կարգէ քահանայութեան լուծեալ է և ինքն զինքն ի Քրիստոսէ նզովեալ է և որոշեալ[17]:

Տասներորդ, զի որպէս հին Իսրայէլ ի տաճարն ապաւինելով, թողին զաստուածադիր օրէնսն Մովսիսի[18], քակեցաւ տաճարն և ի հիմանց տապալեցաւ, այսպէս և տունն Կիլիկեցւոց նման նոցա գտաւ. թողին զօրէնքն Քրիստոսի և թողին զկանոնեալն ի Լուսաւորչէն, և յաջ Լուսաւորչին երդնուին, որ ոչ զԼուսաւորիչն ճանաչէին և ոչ զաջ Լուսաւորչին գիտէին: Քանզի զազրացաւ ամենայն երկիրս Հայոց ի գործոց նոցին. զի բանադրանօք և կապանօք բազումք ի նոցանէ անզեղջ ի գերեզման մտին և կապ անիծիցն իրաւ թէ անիրաւ մնաց ի վերայ նոցին: Եւ այս էր եղծեալ և ջնջեալ գիրն, զոր ետես սուրբ Սահակ ի տեսլեան գիշերին:

Մետասաներորդ՝ լրումն եհաս ժամանակի փրկութեան Թորգոմեան ազգիս: Զի ասաց սուրբն Ներսէս՝ յամենայն շնորհաց Հոգւոյն և մարմնաւորաց փարթամութեանց ազգն Հայոց պակասեալ գտանի. և մնայ սակաւ մի նշոյլք բարեպաշտութեան յոտն Վարագայ ի կողմն Հարաւոյ. և անտի ելեալ ոմանք, գնան ի կողմն Հիւսիսոյ. և սակաւ մի նորոգումն առնու ուղղափառութեամբ տառապեալ ազգն Ըրամեան մինչ ի գալուստ պղծոյն անապատի. և օրինաց

և կանոնաց, որ քակեալ լինի և խախտեալ յանուղղայ առաջնորդաց, միաբանութեամբ նոցին վերստին հաստատութիւն և նորոգումն առնու:

Երկոտասաներորդ՝ զի կատարեցաւ մարգարէութիւն[19] և տեսիլ առն Աստուծոյ սրբոյն Սահակայ Պարթևի, որ ետես ի Վաղարշապատ քաղաքի, զի բեմ[20] չորեքկուսի կայր հաստատեալ ամպանման. և բարձրութիւն նորա հասանէր մինչև յերկինս. և ոսկի սկուտեղ մի ի վերայ բեմին, և մագաղաթ թղաչափ կայր ի մէջ սկտեղին, և բարակ կտաւով ծածկեալ, և ոսկի սեղան ի նմա բարձրագոյն, և ի վերայ սեղանոյն հաց մի և ողկոյզ մի խաղողոյ, և եօթնտակ բեհեզով ծածկեալ, և կամար լուսեղէն ի վերայ բեմին, և խաչ լուսեղէն ի վերայ կամարին կանգնեալ, և ի բեմին մերձ ի սեղանն ձիթենի ծառ կանաչասաղարթ և պտղալից, և երեք ճիւղ և կէս ի վայր կոյս խոնարհեալ միատեսակ հաւասարապէս պտղովն և տերևովն վտիտ և թառամած և ոչ էին նման այլոցն, և ի ձախակողմն սեղանոյն կայր աթոռ ծովագոյն սառնանման, և ի վերայ աթոռոյն կայր սկտեղ արծաթոյ և ի մէջ սկտեղն նափորտ մի բեհեզայ ծալեալ[21], և ի վերայ նափորտին գունդ մի ոսկի, և թուխ կտաւով ծած-

կեալ, և շուրջ զսեղանովն տղայք մաքուրք և սակաւ ի կանանց, և ամենեցուն դէմք ի սեղանն հայէին, և փոխեցան և եղեն ի կերպ երիտասարդի, և շարժեցաւ սեղանն և բեմն ամենայնիւ հանդերձ և ել յերկինս, և ես էի ի զարմացման և կայի հիացեալ վասն տեսլեանն, և առաքեցաւ այր մի յերկնից լուսապայծառ, և գօրացոյց զիս և ասէ Մի երկնչիր, և ասէ ցիս Արիացիր և ի միտ ա՛ռ, զոր ասեմ քեզ. Բեմն ամպեղէն չորեքկուսի՝ հաւատն է ճշմարիտ չորեքծագեան տիեզերաց, զի ամպով վերացաւ Քրիստոս ի յերկինս և ամպովք գալոց է ի դատաստան. և ոսկի սեղանն՝ յականց պատուականաց ընդելուզեալ՝ Սուրբ Երրորդութիւնն[22] է, և ակունքն՝ սուրբքն ամենայն միաւորեալ ընդ Քրիստոսի. և հացն և ողկոյզն Քրիստոսի մարմինն և արիւնն է. եօթն ծածկոյթ բեհեղեայ՝ եօթնարփեան շնորհք Հոգւոյն սրբոյ. և հողմն հանդարտ, որ երաց փեղկ մի ի կըտաւոյն, այն յայտնումն ծածուկ գիտութեանն Աստուծոյ է. և ոսկին՝ պատուականութիւնն Աստուծոյ է. և տետրն թղաչափ եօթն տող ոսկին Լուսաւորիչն Գրիգոր է մինչև ի սուրբն Սահակ. և եղծեալ և ջնջեալ գիրն, որ ոչ երևէր հետն, կաթուղիկոսունքն էին, որ նստան յաթոռ սուրբ Լուսաւորչին յետ Սահակայ. եղ-

ծեալք են և ջնջեալք ի դպրութենէն կենաց, զի անիծիւք և կապանօք զաշխարհս լցին. զի որ զանէծքն սերմանէ անիրաւ, ի Քրիստոսէ լսելոց է զանէծքն, որ ասէ, թէ Երթայք յինէն անիծեալք ի հուրն անշէջ։ Եւ զի ազգս հայոց բոլորովին ի ջնջեալ և ի յեղծեալ գիրն մտաւ յայն օրէն ի հետ, որ կաթուղիկոսութիւնն ի յիշմիածնէն ելաւ, այժմ ողորմեցաւ արարիչն Աստուած և վերստին հաստատեաց զաթոռ Պարթևին Գրիգորի և սքանչելի հրաշիւք յայտնեաց զխաչակրօն և զխարաղնաղզեաց ճգնաւորն տէր Կիրակոս կաթուղիկոսն Վիրապեցի. և այս էր տող և կէս ոսկին, որ հեռի էր յեղծեալ և 'ի ջնջեալ գրէն, և գրեալ տող մի ոսկի և կէսն կարմիր. զի յիշմիածին կաթուղիկոս նստաւ, և մտաք յոսկէգիրն, և ելաք յեղծեալ գրէն և ջնջեալ տառէն. և յամենայն անէծք և նզովք, որ կայր ի վերայ ազգիս ի յանուղղայ[23] առաջնորդաց և 'ի տգէտ կարգաւորաց ի յօրհնութիւն փոխարկեցաւ։

Բայց ամենեքեան աղաչեսցուք զմարդասէրն Աստուած, զի պահեսցէ զսուրբ աթոռս և զմանկունս սորա անփորձ և անսասան կենօք ի յանկարծակի որոգայթից Բելիարայ, ամէն[24]։

Բ. ՅԱՂԱԳՍ ԷՋՄԻԱԾՆԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆՆ Ի ՆՄԱ.

Դարձեալ գիտելի է, թէ վասն էր ի խընդիր ելաք Էջմիածնի իշխանութեանն[1] և կաթուղիկոսութեան Հայկազեան սեռիս, զի ոչ զոյր մեզ թագաւորութեան հրամանք և ոչ իշխան, այլ նուազեալ[2] քան զամենայն որդիս մարդկան։ Այս է, զի ի պկե. (865) թուականին բռնաւորն Թաւրիզոյ գնաց գաղտաբար ի վերայ Վրաց քաղաքին Անկղխու, էառ զքաղաքն և զմեծամեծսն կոտորեաց, և զկին և զորդիս գերեաց աւելի քան զվեցհազար, և լցաւ աշխարհ[3] ամենայն լալով և կոծով։ Եւ ազգս ամենայն յուսահատ եղեն, թէ վասն էր մատնէ Աստուած զհաւատացեալս իւր ի ձեռն անհաւատից։

Եւ եկեղեցւոյ կողողայ մի՝ խաչ ի վերայ առաք ի նոցանէ. և ես ասեմ. Այս Էջմիածնին է պատշաճ, և ոչ այլ եկեղեցեաց, և ինձ մահ

ոչ տացէ Աստուած մինչև բացեալ տեսից զդուռն Էջմիածնին։

Եւ յաւուրս յայնոսիկ տեսի, զի բահ մի եկն կանգնեցաւ առաջի իմ, սուրն ի վերայ գետնի և փայտն ի վեր կոյս բարձրացեալ. և սկսաւ գնալ ի գաւառն Արարատեան և եհաս մինչ ի դուռն եկեղեցւոյ միոջ, կանգնեցաւ. և իմ առեալ զբազմութիւն եղբարցն, ի վերայ աթոռոյս[4] գնացաք զկնի բահին. և ոչ գիտէաք զպատճառ տեսլեանն մինչև ցօր օրհնութեան և կաթուղիկոս ձեռնադրութեան Էջմիածնին. զի ի նոյն օրն առեալ բահ մի ի ձեռս զառաջին տան հիմնարկութիւնն շինութեանն ես արկի եղբարքք իմովք. և մի ոմն յեղբարցն ասաց. Ահա կատարեցաւ երազն քոյ։ Եւ իմ գոհացեալ զԱստուծոյ, փառս ետու նմա ի բարձունս։ Այս առաջին պատճառն։

Դարձեալ երկրորդ պատճառ. տէր Կոստանդին կաթուղիկոսն Սսայ գնաց առ Աստուած. և Գրիգոր անուն եպիսկոպոս մի դնեն կաթուղիկոս. և նա ի նոյն աւուրքն եօթն[5] նոր եպիսկոպոս ձեռնադրէ. և կոչեն արբեցող երէց մի և զԳրիգոր պատարագէ։ Եւ նոր եդեա կաթուղիկոսն ոչ իշխէ, զի բաղայս անուղղայս եդեալ ունէր ի վերայ ինքեան։ Եւ չորս եպիսկոպոս ի ներքին կողմանցն նամակ ողջունի և

մեղադրութեան մեզ և ամենայն արևելեան վարդապետաց և եպիսկոպոսաց և առ իս ուղարկեն, եթէ խոտան և անպիտան գտաք ի մէջ ամենայն ազգաց։ Եւ իմ սկիզբն արարեալ ողջունի նամակաց առ ամենայն ազգս՝ գալ ամենայն միաբանութեամբ ի յօրհնութիւն Էջմիածնին և ձեռնադրութեան կաթուղիկոսութեան ամենայն Հայկազեան սեռիս։ Եւ մինչդեռ զնամակն առ իս ունէի, կրօնաւոր մի եկն առ իս. և հարցանեմ Ուստի՞ գաս. և նա ասէ Յէջմիածնէն։ Եւ գոհացեալ փառս ետու Աստուծոյ, զի ի վաղուց հետէ ոչ էի տեսեալ զոք ի յէջմիածնէն առ իս եկեալ։ Եւ ետու ի նա զնամակն ողջունի սփռել առ ամենեսեան։

Եւ ի նոյն աւուրքն երկուք ոմանք եկեալ առ իս, երկու տեսիլս պատմեցին։ Մինն ասէ. Կամար աղեղան նման ելեալ յարևելից և հասաւ յարևմուտս, և ի հիւսիսոյ ի հարաւ. և լուսաւորեալ պայծառացաւ աշխարհս ամենայն. և ձայն եղև, եթէ սկիզբն եղև ազգիս նորոգման։ Եւ միւսն ասէ, եթէ յէջմիածնի բեմն նստեալ էիր, և վարդով զզոգդ լցեալ ունէիր, և ամենայն ազգս Հայոց եկին, ի վարդէն առին, և վարդն ոչ պակասեցաւ։ Եւ ես ասեմ. ճշմամարի՞տ, մեռոնն է այն, որ տարածելոց է յազգս

ամենայն։ Այս է կրկին պատճառ Հաստատութեան նորոգմանն։

Դարձեալ երրորդ պատճառ. յետ ամի միոյ եկն պատասխանի ի կողմանէն Արարատեան՝ նամակ ողջունի ի մեծ վարդապետէն Յոհաննու Հերմոնի վանից՝ փութանակի և առանց յապաղանաց գալ եպիսկոպոսօք և վարդապետօք ի խորհուրդն բարի և օգտակար, զի մի՛ ի յապաղելն սատանայ խափանումն ածէ գործոյն. և ի բռնաւորէն Արարատեան Աղուպ պէկէն (նամակ) աւետեաց՝ գալ վաղվաղակի առանց ահի և երկիւղի կատարել զխնդիրս ձեր։ Եւ բռնաւորս այս իբրև զկիւրոս Պարսիկ եղև, որ նորոգեաց զԵրուսաղէմ ի ձեռն Սալմանասար [6] իշխանին Հրէից, և յետոյ Դարեհ [7] զՋօրաբաբէլ, որ շինեցաւ ի խզ. ամին. իսկ սա զբաղում ամաց աւերեալն կամեցաւ նորոգել ազգմամբ Հոգւոյն Աստուծոյ, որ և բազում բարիս շնորհեսցէ նմա Տէր Աստուած մարմնաւոր յայսմ աշխարհիս։ Եւ ի գալ նամակիս ի նոյն գիշերի չորս փունջ ծաղիկ՝ երկուսն վարդ և երկուսն մանուշակ՝ բերեալ եդին ի ձեռս մեր՝ զերկուսն ի ձեռս իմ և զերկուսն ի ձեռս Հարազատին իմոյ Կարապետ վարդապետին։ Եւ զարթուցեալ ասեմք. Ե՛կ նշանեալ դիտեսցո՛ւք, թէ զինչ բարի լինելոց է։ Եւ ի լուսանալ առաւօտուն

եկն այր մի առ մեզ տալ մեզ աւետիս ուրախութեան, եթէ վարդապետն Կիրակոս և եպիսկոպոսն Գաբրիէլ և Զաքարէ կրօնաւորն եկին ի սուրբ ուխտ ի յԱստուածածնէն: Եւ յղեալ կոչեցաք զնոսա ի յԱրճէշ քաղաք. և մեծաւ գոհութեամբ և անճառելի ուրախութեամբ օրհնեցաք զՔրիստոս, զի ի վաղուց հետէ կարօտ կայաք ցանկալի եղբարցն:

Դարձեալ չորրորդ պատճառ, և հրաշք յայտնութեան: Զի ի սոյն աւուրցս որ կայր մեզ առաջի, Ստեփաննոս ոմն ճգնաւոր և միայնակեաց, ի կողմանէն Աղթամարայ տրտնջելով գայր առ իս, թէ՝ վասն էր ոչ գան յԱղթամար ի հնազանդութիւն նոցա առաջնորդին տէր Զաքարիա կաթուղիկոսին. և երթեալ ննջէ ի դուռն սուրբ եկեղեցւոյն Ստեփաննոսի նախավկային ի գեղն Աղի. և դան ի գիշերի սպիտակազգեստք, և Լուսաւորիչն մեր Գրիգոր զաջն իւր դնէ ի վերայ գլխոյ նորա և ասէ. Քրթմընջես վարդապետացն՝ զալ նորոգել զտաճար փառաց անուան Միածնի Որդւոյն Աստուծոյ զսուրբ Էջմիածինն: Եւ նորա եկեալ առ իս մեզ՝ այ ետ Աստուծոյ, և առեալ զնա գնացաք ի սուրբ Էջմիածինն բերկրալից ուրախութեամբ:

Դարձեալ հինգերորդ պատճառ սքանչելի յայտնութեամբ. զի ի սոյն օր ելանելոյ մեր ի

սուրբ ուխտէն Աստուածածնի Մեծոփայ վանից վարդապետօք և եպիսկոպոսօք և քահանայիւք եկն այր մի բարեպաշտ և երկիւղած և ասէ. Յայսմ գիշերի բազմութիւնք զօրաց բազմաց անթիւ և անհամար սպառազինեալք ամենեքեան կարմրով, կանաչով և սպիտակով. և ասեմ. Ո՞յք են զօրքս այս. և նոքա ասեն. Զօրք Էջմիածնին եմք, եկեալ եմք ի խնդիր վարդապետացն, և յանկարծակի առեալ զվարդապետքն և զքահանայքն, թռեալք ի վերայ օդոյն, առժամայն հասաք յԷջմիածինն ի Վաղարշապատ քաղաք. և առեալ զսուրբ Աւետարանն, վիճակ արկաք ամենայն բազմութեամբ եղբարցն. ասէ աւետարանն. Դարձաւ Յիսուս ի գաւառն իւր. դարձեալ արկաք վիճակ. ասէ աւետարանն. Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի և դարձեալ երրորդ անգամ. աւետարանն ասէ. Դարձաւ Յիսուս ի գաւառ իւր և դարձեալ առաք զեփուտն Նիկիական. ասէ. Ճանապարհդ այդ բարի է և Տէր Աստուած Յիսուս Քրիստոս կատարէ զխնդիր ձեր:

Եւ ապա ուրախութեամբ մեծաւ և աներկբայ յուսադրութեամբ եկեալ գնացաք յամենալից և օրհնեալ գաւառն ի Դարօնս և յՈտն Մասեաց ի յԱկռռի. և անտի մտաք ի կենդա-

նաթաղ գերեզման սուրբ Լուսաւորչին ի սուրբ Վիրապն. և անտի յերկրպագութիւն սուրբ Գեղարդեանն և սկզբնատիպ Պատկերի Մարդեղութեանն Քրիստոսի: Եւ ապա պատահեալ դիպեցաք մեծ վարդապետին մերոյ և առեալ եկաք ի գիւղաքաղաքն Երևան. աստ էր տեսանել զուրախութիւն և զցնծութիւն ամենայն մերային ազգին. զի փողն զանգակացն գոչէր. երիտասարդքն գոչէին, ծերքն աղաղակէին և զԱստուած ցնծութեամբ օրհնէին, մանկունքն խայտային, կանայքն երկրպագութեամբ և լալով զամենեսեան զարհուրեցուցանէին. և անօրինացն ուշ եդեալ զարմանային: Եւ որպէս յաւուր գալստեան Փրկչին ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ մեծաւ ուրախութեամբ ընդ առաջ ելին, նոյնպէս և այսօր Հայոցս եղև, զի ի վաղուց հետէ անտերունջ էին կացեալ և ոչ էր տեսեալ այսպիսի վարդապետք և եպիսկոպոսք ի մի միաբանութիւն: Եւ սիրով ընկալան զմեզ և զժողովս մեր, և զամենայն եղբարքս մեր ողջունեալ որպէս զհրեշտակ Աստուծոյ մեծամեծք և փոքունք, կարգաւորք և աշխարհականք: Իսկ ի միւս օրն եկն Հրաման ի բռնաւորէն Աղուլ-պէկէն. և հասաք առ նա. և նա իբրև զթագաւոր քրիստոնէից սիրով ժողովեալ զզօրս իւր և զմեզ զամենեսեան, փողով և թմբկով[8]

գոչմամբ բարձրագունիւ մտաք ի սուրբ քաղաքն Վաղարշապատ: Եւ հաւատացեալք և հաւատարիմ ժողովուրդն ի Քրիստոս և անհաւատքն ընդառաջ ելեալ զարմանային. զի յանցեալ սմին զՀամշուլտէ քաղաքն կործանեցին և կարմիր նշան եդին. իսկ այսօր նոր նշան և հրաշագործութիւն գործեաց Միածին Որդին: Որպէս Տրդատ խոզացեալ դիմօք և զօրքն ի գիւաց լլկեալք ելին ընդ առաջ Լուսաւորչին, այսպէս դիպեցաւ ողորմութեամբ Աստուծոյ ի նորոգմանս վերջին: Եւ մեք ամենեքեան միաբան օրհնեցաք զԱստուած ի ձայն ցնծութեան: Փառք Քեզ Աստուած յաղագս ամենայնի:

Եւ հրաման եղև ի բռնաւորէն օրհնել կաթուղիկոս առանց հակառակութեան. և բազումք ի յեղբարցն յառաջ կոչեցաք[9] գալ ի յառաջնորդութիւն Թորգոմական գրոհիս. և ոչ կամեցան բառնալ զծանրութիւն դառնութեան բարձրագոյն աստիճանին: Ապա յետ այնորիկ ապաւինեցաք յԱստուած և միաբանութեամբ սկսաք աղօթիւք և պաղատանօք խնդրել յԱստուծոյ տալ մեզ առաջնորդ ըստ կամաց իւրոց: Եւ տեսանէ ոմն ի յեղբարցն տեսլեամբ զիշերոյ, զի արեգակն ելանէր յարևելից խաւարազգեաց և առանց լուսոյ, և գայ կանգնի մերձ սուրբ եկեղեցւոյն, և ապա ընթանայ յարևմուտս, և յետ դառնայ յարևմտից, և գայ զՀիւսիսային

կողմամբն, և ի լոյս դառնայ, և խոնարհեալ
իջանէ յերկիր ի դուռն Հիւսիսոյ սուրբ Էջմի-
ածնին. և տեսանէ զբազմութիւն եղբարցն ի
գլուխ կաթուղիկէին, և էր գրեալ ի վերայ արե-
գական. Հինն էանց և ահա ամենայն ինչ նոր
եղև. և լուսափայլ այր մի ասէ. Հինն մեղքն
է, խափանի, արդարութիւնն այսօր նոր սկսանի։
Եւ դարձեալ ի միւս օրն տեսանէ ձի սպիտակ,
և լուսաւոր այր մի ի վերայ նստեալ, և գայր
ի վերայ օդոյս, և խոնարհեալ իջանէ ի մէջ
եկեղեցւոյն, և նստի ընդ աջմէ բեմին. և հար-
ցանեն եղբարքն. Ուստի գաս. և նա ասէ. Յա-
րևմտից 'ի Ֆռանկաց թագաւորէն. ասէ. Թա-
գաւորն թագաւորաց զիս առ ձեզ առաքեաց
և ասէ. Երեք կամուրջ կայ յԷջմիածինն ի Վա-
ղարշապատ քաղաքիդ. բարձէք ի միջոյ, զի
գայ մտանէ թագաւորն առ ձեզ։ Եւ 'ի միւս
օրն տեսանէ ոմն յեղբարցն, զի բացաւ դուռն
եկեղեցւոյն բարձրագունի և հանեալ զբազմու-
թիւն եղբարցն ի բեմ եկեղեցւոյն և բացաւ
դուռն մի յետ[10] սեղանոյն, և մտաք ի միւս
այլ հին եկեղեցի և ելաք դարձեալ նոյնպէս
ի բեմն. և բացաւ դուռն մի և յերեք եկեղեցիք
մտաք և ելաք. և ապա մտաք ի զարդարեալ
և ի պտղալից պարտէզ մի. և այր մի կանգնեալ
ուռոգէր զպարտէզն. և ասեն եղբարքն այն.

«Անպատշաճ և անյարմար է պարտէզս. և ասէ
ծերունի այր՝ «Համբերեցէք, որդիք իմ, և զար-
մանալի պտուղ տամ ձեզ». և ահա եկն կրօնա-
ւոր մի և ասէ. «եկայք, տեսէք զտէր պարտի-
զին». և ասեմք. «ոչ գոյ աղերս, զի պակասե-
ցաւ աղերսն». և սկսաւ ասել. Ուրախ եղէ ես,
ոյք ասէին ցիս. և ասաց գՀայր մեր յերկինսն.
և նստաք. և ասէ այրն. «Սուքեասեանքն ի
լեառն Սուկաւէտ քանի՞ ամ կացին. և ասեմք.
«քառասուն չորս ամ». և ասէ այրն. Քանի՞ էին
նոքա. և ասեմք. Երեքհարիւր ոգիք էին. և
դարձեալ ասէ. Արիք մանկաղ առէք, և զսպի-
տակացեալ զարտորայքս զայս, որ կայ ձեր ա-
ռաջ, հնձեցէք. և ետ մանկաղ ի ձեռս ամե-
նեցուն. և սկսաք հնձել զանդաստանն սպիտա-
կացեալ. և զարթեաւ եղբայրն և ասէ. Արիք
ի հրեշտակաց յօգնութիւն եկելոցդ Հոգևոր գոր-
ծոյդ, արիք աղօթս արարէք և հրեշտակաց
տօն կատարեցէք։ Եւ սկսան եղբարքն տօն
կատարել մինչ ի ժամ առաւօտուն։ Այս տեսիլ
եղև ի յօրհնել կաթուղիկոսին, որ խնդրէաք տալ
մեզ առաջնորդ։ Դարձեալ ոմն ի յեղբարցն առ-
նու նուէր և մատաղ և գնան ի սուրբ վար-
դապետի գերեզմանն երկրորդ Լուսաւորչին Մես-
րոպայ և հայցեն պաղատանօք զաջողումն ձեռ-
նադրութեանն. և տեսանէ զդաւազանն, որ

կայր ի ձեռին իւրում, զի աղբիւրացաւ և երեք մեծամեծ անօթ լցաւ։ Եւ դարձեալ եկին յէջմիածինն և անդ յաղօթս կացեալ, խնդրեն ի Տեառնէ զաջողումն գործոյն։ Եւ տեսանեն, զի ծառ մի տնկեցաւ ի մէջ եկեղեցւոյն՝ ծառ խընձորի. և ելեալ ի ծառն, առնոյր և բաժանէր. և ոչ պակասէր պտուղն ի ծառէն։ Եւ այգուցն կին մի այլազգի եկն սեղանով առ քահանայս և ասէ. Կանթեղով լցաւ եկեղեցիս։ Եւ ծերունի այր մի առեալ լապտեր ի ձեռս իւր, ել ի վերին կամար եկեղեցւոյն և վառեաց զմեծ կանթեղ եկեղեցւոյն, և դուռն եդիր պայծառ և գեղեցիկ դրանն Հիւսիսոյ. և զարդարեաց զարմանալի վարագուրօք. և ամենեքեան միաբանութեամբ փառս ետուն Աստուծոյ։ Եւ դարձեալ այր մի աստուածապաշտ եկն և ասէ. Ահա կանթեղ մի կախեցաւ յերկնից, և լուսաւորեալ պայծառացաւ յաշխարհս ամենայն, և հարցանեմ. ո՞ւմ է կանթեղս այս. և ասէ այր մի. Կանթեղս այս Էջմիածնին է, որ ի բաղում ժամանակաց հետէ խաւարեալ էր, և այժմ ողորմեցաւ Աստուած և կամի լուսաւորել։ Եւ մեք ուրախացեալ օրհնեցաք զԱստուած։ Եւ դարձեալ ի նոյն օրն օրհնութեան ձեռնադրութեանն արկին վիճակ ի սուրբ աւետարանն, և ել վիճակն Կիրակոս հայրապետին։ Եւ առանց հակառակութեան

եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին ատենին։ Եւ մեք հիացեալ զարմացաք զհնազանդութիւն առն Աստուծոյ և զթողուլ կամաց իւրոց. զի կարի անհնազանդ բարս ունէր և ատէր զփառս երկրաւորս։ Եւ յիշեցաք զԱստուած և սկսաք ամենեքեան օրհնել զԱստուած. և սկիզբն արարաք ձեռնադրութեան։ Եւ ահա եկն ի ժամուն յայնմիկ արծիւ մի սաւառնեալ թեւօք, սաստիկ գոչմամբ նստաւ ի վերայ գլխոյ Էջմիածնին. և թողին բազումք զհոգևոր խրախութիւնն, ելեալ տեսին, և եկեալ պատմեցին։ Եւ մեք ձեռս ի վեր ամբարձեալ օրհնութիւն և փառս տուաք օրհնելոյն յամենայն արարածոց ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից ամէն։

Փա՛ռք քեզ ամենասուրբ Երրորդութիւն Հայր և Որդի և սուրբ Հոգի, զի կատարեցեր զխնդրուածս Հայկազեան սեռի. և ճշմարտութիւն քարոզութեան աւետարանին յայտնի եղև ամենեցուն որ ասէ. Որ խնդրէ, առնու, և որ Հայցէ, գտանէ, որ բախէ, բացցի նմա. և դարձեալ՝ զամենայն, զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ ի Հօրէ, տացի ձեզ ձրի. և թէ՝ երկինք և երկիր անցցեն, բանք իմ մի՛ անցանիցեն։ Եւ մեք զոր ինչ խնդրեցաք, և առաք յԱստուծոյ 'ի Հօրէ։

Եւ հասաք ի սուրբ Պենտէկոստէն աւուր գալստեան և իջման Հոգւոյն սրբոյ յառաքեալսն. և մեծահանդէս ժողով արարեալ, օրհնեցաք զաստուածազործակ մեռոնն, և բաժանեցաք ընդ ամենայն յազգս Թորգոմեան, և կանոնեցաք ձրի տալ և ձրի առնուլ ըստ նմանութեան առաքելական գնդին, զոր հրաման ի Քրիստոսէ առին: Եւ բարձաք զսղանդն Սիմոնական. և ով ոք յանդգնի, զպատասխանին նա տացէ առաջի Քրիստոսի, և մեք անպարտ եմք: Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք և պատիւ յաւիտեանս ամէն:

Բայց աղաչեմ ամենայն վարդապետօք և եպիսկոպոսօք և քահանայական դասուք, որ հանդիպիք սակաւ պատմութեանս ճշմարիտ ընթերցասէրք և հետևողք աստուածային գիտութեան և իմաստութեան զսակաւ աշխատութիւնս իմ տեսջիք ի տկար և ի զբաղեալ մտաց իմոց. և թողութիւն հայցեցէք մեզ և վարդապետացն մերոց և ծնողացն մերոց և հարազատաց մերոց և ամենայն յարեան մերձաւորաց մերոց, թշնամեաց և ատելեաց մերոց: Եւ Քրիստոս Աստուած զձերն թողցէ: Եւ զոր ի հետ գայ, դուք զրեսջիք և մի՛ անփոյթ լինիջիք յետ մեր, աղաչեմ: Պրբ. (892) թուականին:

Գ. ՎԱՍՆ ԱՔՍՈՐՄԱՆ ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ.

—

Դարձեալ և այս գիտելի է ամենայն սրբազան իմաստուն մանկանց եկեղեցւոյ, զի այս երջանիկ և երանելի սուրբ հայրապետս տէր Կիրակոս երկու ամ նստաւ յաթոռ պատրիարքութեանն ի Կաթուղիկէն[1] սուրբ Էջմիածին ի Վաղարշապատ քաղաքի ի քրիստոսադիր աթոռն մեր հայրենի: Եւ աստուածապաշտ ազգս հայկազեան Արարատ և կողմն Վասպուրական մարմնաւոր[2] պիտոյիւք անասնօք և չորքոտանիւք լցին զսուրբ աթոռն: Բայց անգիտութիւն մեծ արարին կաթուղիկոսն և վերակացուք նորին՝ Գաբրիէլ եպիսկոպոս ոմն ի սուրբ ուխտէն Յոհաննու վանից և վարդապետ մի Կիրակոս անուն ի կողմանէն Ռշտունեաց. մինն ի յանասնոց նմա[3] ոչ նուիրեցին վասն սիրոյ և աղերսանաց. և նա յոյժ դառնացեալ կայր ի յոգի

իւր և ոչ գիտէր թէ ինչ նենգութիւն և որոգայթ դնէր սուրբ և նոր եդեալ աթոռոյն. և դարձեալ յոյժ մախայր, եթէ գրեալ է ի գիրս, թէ ի կողմանէն Վարագայ նորոգի ազգս Հայոց և սուրբ կաթուղիկէն Վաղարշապատու. զի յոմանց յոմանց լսէին մարդիկք. և դարձեալ ատելութիւն ունէր ընդ կողմանս Վասպուրականին. ետես զի ամենայն բարութեամբ և շնորհօք զարդարեալ էր ազգս Հայոց. մինչ զի երանի տային ամենայն հաւատացեալք և այլազգինք շրջակայք թէ հաւատ և օրէնք Քրիստոսի հաւատն է, և այլն սուտ է։ Զի տեսանէին զերանելի այրն Աստուծոյ ի վարս ճգնութեան զտիւ և զգիշեր մշտնջենաւոր սրբապահութեամբ, բայց որ մարդասպանն էր ի սկզբանէ չարանախանձ Բելիարն, որպէս միաբանեցոյց ընդ ինքեան զդասս հրեղինաց և ասէր «աստուածանալ կամիմ և զպատիւ մեծութեան ձեզ կամիմ տալ» և կորոյս զդասս հրեշտակաց ընդ ինքեան, և որպէս նախանձեցաւ ի պատիւ հօրն մեր Ադամայ և ի ձեռն մօրն Եւայի եհան զնա ի դրախտէն փափկութեան, այսպէս վարդապետ և եպիսկոպոս ոմն Մարկոս անուն յաշակերտաց վարդապետին Յոհաննու, որ գնացեալ էր ի կողմն Վրաց և ոչ հանդիպեցաւ ի ձեռնադրութիւն սուրբ հայրապետին և եկեալ յետոյ ետես զար-

գարեալ զսուրբ Կաթուղիկէն, զի ամենեքեան երանի տային կողմանց վարդապետաց և քահանայից ծովու բոլորին[4]. և նա յոյժ դառնութեամբ մաղձին խաւարեցոյց զիմացումն բանականին մասին և ոչ գիտէ զինչ առնիցէ. վասն որոյ գտեալ զոմն կրօնաւոր նման ինքեան նախանձոտ և յաչագկոտ Աստուածատուր անուն ինքնահաւան և կեղծաւոր, գոլով ի սուրբ ուխտէն Սաղմոսավանից։ Եւ բաղայս անուղղայս կամէին դնել սուրբ ճգնաւորին և ասէին. «ճգնութեամբ Լուսաւորչին հանգոյն է և հօր. բայց կրկին պակասութիւն գտանի ի նմա. մին, զի ի կողմանէն յԱղթամարայ է, որ ի բազում ժամանակաց հետէ բանադրեալք են. և միւսն, զի պարտ էր ի կաթուղիկոսաց եպիսկոպոս լինել, և ապա յիպիսկոպոսաց կաթուղիկոս ձեռնադրիլ»։ Ողորմելի հպարտացեալքն ոչ գիտելով զգիրս կանոնաց սուրբ առաքելոցն, Կղեմենտեայ և սուրբ ժողովոյն Նիկիոյ և զաստուածաբանին Գրիգորի և զայլոցն ամենայն, որ ուսուցանեն մեզ, եթէ հաւանութեամբ ամենայն ազգին երեք եպիսկոպոս եպիսկոպոս ձեռնադրեն և երկոտասան եպիսկոպոսք կաթուղիկոս օծանեն ըստ Հայոց, իսկ ըստ Յունաց երեք արքեպիսկոպոսք զպատրիարքն ձեռնադրեն, և զայս ոչ իմացեալ սոցա, անօթ եղեն երկոքեանն չարին սատանայի, նա-

մակ մահաբեր գրեն առ եպիսկոպոս ոմն Զա-
քարիա անուն սուրբ ուխտին Հաւուցթառու
նման ինքեանց նախանձոտ և ատեցող եղբարց,
եթէ կաթուղիկոս, որ դուք եղեալ էք, է ի
կողմանէն Վասպուրական Քաջբերունեաց և ի
ներքոյ անիծիւ և բանադրանացն Աղթամարայ,
և զմեզ և զգաւառս մեր արկեալ էք ի ներքոյ
անիծիւ դատապարտութեան. այլ արի՛ մեք և
դու միաբանութեամբ նամակ ողջունի գրեմք
առ վարդապետն Յովհաննէս, և կամ գնամք
առ նա, և միաբանութեամբ նորա կոչեմք
զվարդապետն Տաթեւու Զմաւոն անուն, հանեմք
զնա յաթոռոյն, և դնեմք ի տեղի նորա զեպիս-
կոսն Մակուայ առաքելոյն Թադէոսի, զոր ի
նոյն օր ձեռնադրութեանն վարդապետն այն և
Զաքարիայն ոչ կամեցան լինել կաթուղիկոս
վասն ատելութեանն[5], որ առ նա ունէին։ Եւ
Զաքարիայն այն, տեսեալ զնամակ չար նախան-
ձուն, ուրախացաւ սատանայական բերկրութեամբ
և ընդունակ եղև չարին. իբրև զփուշն դժնիկ
այրեաց զինքն և զբազումս ընդ ինքեան ատե-
լութեամբ չարին. յարուցեալ գնաց առ վարդա-
պետն Յովհաննէս. և որպէս Բաղակ կաշառեաց
զմոգն Բաղաամ, նոյն կաշառեցին սոքա զվար-
դապետն Յովհաննէս մականուն կոլոտիկ, որ էր
վարժապետ ի սոյն ժամանակիս խլացեալ ա-

կանջօք։ Եւ նա նոյն ժամայն ժողովեաց զբա-
զում անուղղայ եպիսկոպոսք և քահանայք աւելի
քան զերեսուն և զքառասուն ոգի, եկեալ մտին ի
սուրբ տաճարՄիածնին բարկութեամբ և սրտմտու-
թեամբ լցեալ, զամենայն թոյնք դառնութեան ու-
նելով յինքեան։ Ողջոյն ետուն նմա և ոչ խաղաղու-
թեան. զի, որ ինքն էր ձեռնադրեալ կաթու-
ղիկոս, և եպիսկոպոսն Մակուայ տէր Գրիգոր,
և գաւառն վարդապետութեան իւրովին ձե-
ռօք և ամենայն վարդապետօք և եպիսկոպոսօք
ի սուրբ Էջմիածինն վարդապետ արարեալ, այ-
սօր[6] ուրանայ և հրէտարար ի վերայ սուրբ հօրն
յարուցեալ. և նորա փախուստ առեալ, մտանէ
ի տուն քրիստոնէի միոջ գաղտագողի, և դո-
ղայր յահէ քահանայիցն, որպէս Տէրն մեր ի
հրէիցն. և նոքա որոնեալ աստ և անդ, գտին
զնա և առեալ տարան առ բռնաւորն Աղուպ,
որպէս հրէայքն առ Պիղատոս և Հերովդէս[7]։
Եւ ասէ վարդապետն Յովհաննէս առ բռնաւորն.
Պարոն Աղուպ-բէկ, կաթուղիկոսս այս սուտ է.
վասն զի ոչ է մկրտած. և այն, որ ոչ է մկրը-
տեալ, ոչ է քրիստոնեայ. և կախարդ և հեր-
ձուածող է սա. զի զօծումն հիւանդաց բերեալ
է 'ի Կ. Պոլսէ. եթէ կամիս դու, որ յաթոռդ
այդ նստի դա, կամք մեր ամենեցուն այս է,
զի մկրտեմք և նոր եպիսկոպոս և կաթուղիկոս

ձեռնադրեմք, և ապա նստի յաթոռդ հօր մերոյ հոգևոր Գրիգորի։ Եւ ասէ բռնաւորն ցվարդապետն. Հապա[8] զիտեմ դու ձեռնադրեցեր զդա կաթուղիկոս։ Եւ նա ուրանայ զճշմարտութիւնն առաջի բռնաւորին և ասէ. Քաւ լիցի. ես ոչ եմ ձեռնադրեալ զնա, այլ Թովմէն[9] և ընկերք նորին։ Որ գիտակն է գաղտնեաց և իրաւագէտն ի բարձունս, զիտէ, զի մին փոխ զիր ետուն ինձ ընթեռնուլ օտարապէս, և յերկուսումն յաշակերտաց մերոց կրօնաւոր մի Կարապետ անուն։ Եւ տղայ ոմն յազգականաց մերոց յոյժ ընդդիմախօս Ներսուն անուն բարձր ձայնիւ ասէ. Սոքա ամենեքեան անհաւատ գոլով և ստախօս քրիստոնեայք, ոչ են ճշմարիտ, այլ խաբեբայք։ Եւ Ստեփաննոս ոմն վարդապետ անուն եհար զբերան մանկանն և լցաւ արեամբ։ Եւ բարկացեալ բռնաւորն, հրաման ետ հանել արտաքս զամենեսեան։ Եւ եպիսկոպոսն ասացեալ Զաքարիէն եկաց առ նա միայն և ասէ. Անթիւ և անհամար արծաթ տամ. քեզ զինչ փոյթ է նորա արտաքս հանելն և ոչ հանելն։ Եւ նորա հաւանեալ ի կաշառ արծաթոյն, հրաման տայ ձեռնադրել զեպիսկոպոս առաքելոյն Թադէոսի։

Իսկ երանելի այրն Աստուծոյ (լուեալ) զայս ամենեայն և բազում քան զայս անպատմելի և անասելի հայհոյութիւն և չարախօսութիւն,

արարեալ առաջի բռնաւորին, ըստ նմանութեան Քրիստոսի լուռ կայր և անմռունչ. և յարուցեալ գնաց ի տուն քրիստոնէի միոջ։

Իսկ ժողովն անիրաւ մտեալ ի սուրբ Էջմիածինն և սկսան պատարագել զՔրիստոս ուրախութեամբ և ոտնհար նենգութեամբ. ձայնեցին Հայոց տեառն Գրիգորի։ Եւ անիմաստն այն եպիսկոպոսն Գրիգոր գիտաց ի միտս իւր, եթէ քաջութիւն արութեան գործեաց. ոչ քաջութիւն, այլ հակառակութիւն ըստ նմանութեան Գադանայ, Արիրոնի և Կորխայ, որ հակառակ եղեն Հրամանացն Աստուծոյ և ծառային Աստուծոյ Մովսէսի։ Եւ պատարագեցին զՔրիստոս ոչ ի հաշտութիւն, այլ ի բարկութիւն, և ոչ յիշեցին զբան Տեառն, որ ասէ. Երթ հաշտեաց ընդ եղբօրն և ապա եկեալ մատուսջիր զպատարագն։ Ասա է տեսանել զաղէտ տարակուսանացն և զահագին վնաս մեղանչական ազգիս մերոյ՝ վարդապետաց, եպիսկոպոսաց և կարգաւորաց[10] մերոց ազգիս դառնութեանց. զի Քրիստոս յանհաւատ Հրէիցն խաչեցաւ յԵրուսաղէմ, յԷջմիածինն ի հաւատացեալ կարգաւորաց։ Եւ կատարեցին զչար խորհուրդս իւրեանց. և ապա սկսան զոպասաւոր վարդապետք Էջմիածնին զվարդապետն Կիրակոս Ռշտունեաց և զրաբունապետն մեր զՍարգիս ի սուրբ ուխտէն Սալ-

նապատայ մատնել անօրինաց. 'ի միոյն առին տասներեք հազար դահեկան և ի միւսոյն[11] վեց հազար դահեկան մատնութեամբ երկու եպիսկոպոսացն Ջաքարէի և Անտոնի։ Եւ լցաւ երկիր գայթակղութեամբ և հայհոյութեամբ ի նոցանէ և տարածեցաւ մինչև ի ծագս աշխարհի։

Աւա՜ղ անմտութեան ազգիս. աւա՜ղ թշուառութեանս. աւա՜ղ կուրութեանս աշխարհի. աւա՜ղ տխմարութեանս. աւա՜ղ հիքութեանս. աւա՜ղ չարութեանս. թէ որքա՜ն լուսաւորս խաւարեցուցին ազգս Հայոց. որչա՜փ աստուածաբան բերանս խցեցին. քանի՜ սիւնս եկեղեցւոյ տապալեցին. քանի՜ քահանայապետս ի հող մահու իջուցին. զԱրիստակէս սրախոխող արարին. զԱրթանէս հեռահալած առնէին. զՅուսիկն ողորածեծ արարեալ ի կենաց վճարեցին. զմեծն Ներսէս Հանին յաթոռոյն և զդրան երէցն Արշակայ Զոնակ[12] անուն ի տեղի նորա ձեռնադրեալ ի Դառն[13] ի քաղաքի, և յետոյ դեղակուր արարեալ մահացուցին. զՍուրբն Սահակ ի մետաղս արտաքսեցին, և եդին զՍուրմակն, զՁմէլ և զԲարդիշուն. զարքայն Տրդատ զբարեպաշտն և զբարեսէրն զմեծ երախտաւորն իւրեանց նենգութեամբ դաւեալ կորուսանէին. զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն այնքան ձանձրացուցին, մինչև յանբնակ տեղիս վտարեցին. քան

զթունաւոր սողունս վիրապին այլ դառնագոյն և դժնդակ բարս ցուցանէին սուրբ Լուսաւորչին. վասն որոյ ոչ երկարեաց ի մէջ նոցին, թերևս ի նա ձեռնամուխ լինէին. և զլուսափայլ մանուկն Գրիգորիս զեղբայր Յուսկանն երէց քան զնա և բարձր Հաստակաւ Հնգետասան ամաց եդին ի Հայրապետական աթոռ, որ զչարսն յանդիմանէ և զեկեղեցիս[14] պայծառացեալ լուսաւորէր, որ հաւատացեալ էին ի ձեռն առաքելոցն Եղիշէին և Ստեփէի. կապեալ ի յագի երիվարին և զնա ի կենաց այս դառն աշխարհիս ի բաց վճարէին. և զերկրորդ Լուսաւորիչն զմեծն Մեսրոպ վարդապետն ընտրեալ ի յԱստուծոյ, որ գիր ի յերկնից իջոյց նման Մովսիսի և աշակերտեալ հոգևոր որդիք նորա զթարգմանիչսն Աստուածաշունչ Գրոց զվարդապետքն արիք զԴաւիթ և զՄովսէս ապերախտ և անընդունակ լեալ յաշխարհէս մեր ի բաց մերժեցին։ Եւ զայսպիսի լուսաւորիչք և պայծառ ջահք եկեղեցւոյ, որ կամէր ամենայն ազգս Հայոց առժամանակ մի ցնծալ ի լոյս նոցա, այսպիսի օրինակաւ յաշխարհէս կորուսին զզիտութիւն և զկեանս նոցա։ Եւ ի մերում ժամանակին, եթէ զսուրբ Հայրապետն Կիրակոս, զինչ էր զարմանք։

Բայց այժմ զարձցուք առ ձեզ, ով մեծ

վարժապետ Յովհաննէս. զՍղուանից աթոռն յերկուս բաժանեցեր. և նախանձու և դառն ատելութեամբ ի Հայրապետական աթոռոյն աքսորեցեր զընտրեալն ի Հոգւոյն Սրբոյ, որ քառասուն և հինգ ամ էր, ի զինւոյ և ի մսոյ և ի յիւղոյ և ի կթոյ անաւնոց ոչ էր վայելեալ. և երկոտասան եպիսկոպոսօք և երկոտասան վարդապետօք ի քահանայապետութեան աստիճան եդաւ. և ի միւս օրն վարդապետութեանն գաւազան ամենայն վարդապետօք ի ձեռն նորա եդեր. այժմ զգաւազանն ի ձեռաց նորա յափշտակեցեր, զմատանին ի մատանցն նորա առեր. իբր զդատապարտեալ ծառայ առաջի անօրինաց անարգեցեր. զինչ էր վնաս դորա. զի անտէրունչ էր և անօգնական. գիտեմ Աստուած օգնական էր նմա. դու ոչ երկեար յԱստուծոյ և ոչ ամօթ կրեցեր յանօրինաց և յօրինաւորաց, յարանց և ի կանանց. այսպիսի վարդապետութիւն ուսար ի Քրիստոսէ. զայդ ուսուցին առաքեալքն Քրիստոսի: Դու ականջօքդ խլացեալ, սպիտակ մորուօք, զի դեղին է փոխարկեալ, մօտեալ գերեզմանի, զդասատունս Հայոց ուղղափառ աստուածաբանութեանն խափանեցեր. զարատ և զբիծն աղթարմայութեան, ի Կիլիկեցւոյն ի քահանայապետութիւն Լուսաւորչին մտեալ, Աստուած ազատեաց. զբանադրութիւն

և զկապանք կղզւոյն Աղթամարայ յօրհնութիւն փոխեաց. Դու զամենեցուն բերան լցեր[15]: Կիլիկեցիքն զհամբաւս անգիտութեան և անհամութեան քո լսեցին և գտեալ երէց մի աշխարհի, որ ի նոցանէ էր ձեռնադրեալ Կարապետ անուն, դարձեալ վերստին հակառակութեամբ կաթուղիկոս եդին. անիծիւք և անուղղայ վարուք դարձեալ կամէին զհայքս կործանել. զինչ պատասխանի տալոց ես Քրիստոսի յաւուրն դատաստանի:

Ո՛վ երջանիկ դասք վարդապետաց և սրբազան գունդք եպիսկոպոսաց, դուք կոչեցիք յաստիճան առաքելական աթոռոյ Լուսաւորչին Գրիգորի. և դարձեալ դուք հանիք յաթոռոյն Գրիգորի և հրէաբար դատապարտեալ հայհոյէք: Աւա՜ղ և վա՜յ անձանց մերոց: Ողբացէք, երկինք և երկիր, ծառք անտառի և ծաղիկք դաշտի, լերինք և բարձունք և բոյսք ամենայն, զանմրտութիւն ազգիս մերոյ, և սոպռ և կոպիտ, բիրտ և անհնազանդ քահանայական կարգիս և զանզգամութիւն կրօնաւորաց հայկազն սեռի. դարձեալ վա՜յ և եղե՛ւկ է անմտութեան ազգիս մերոյ. Փարաւոն, որ անաստուածն էր, ի ժամանակի սովոյն զիրաւունս քրմացն ամբողջ պահէր, պատիւ առնելով որպէս քահանայից. և յորժամ Սաւուղ բարկանայր քահանայիցն վասն

կերակրելոյն զԳաւիթ, հրամայեաց Հրէիցն սպանանել զքահանայսն. և յորժամ Պօղոս որմն բռեալ կոչէր զքահանայապետն Աննա, և սպասաւորացն ասացեալ Զքահանայապետն Աստուծոյ հայհոյե՞ս, և նորա պատասխանեալ ասէր. Ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ. թէպէտ և գիտէր իսկ, յայտարարեալ թէ պատկառիլ պարտ է յօծութեան շնորհէն և աստիճանէն։ Այլ և Տէրն մեր և Աստուած, յորժամ ածեալ լինէր յատեան անաստուած Հրէիցն, որ ապտակէր զնա, լիրբ և ապաշնորհ ծառայն երախտամոռաց ասէր. Այդպէ՞ս պատասխանի տաս քահանայապետին։ Եւ այսպէս յամենայն ուրեք պատկառէին ի քահանայական պատուոյն։ Իսկ սոքա միայն երևեցան լիրբ և յանդուգն, ոչ ունելով զերկիւղն Աստուծոյ և ոչ պատկառելով ի շնորհէ քահանայութեանն. այլ զցանկութիւնն սատանայական կատարէին անմտութեամբ ի կորուստ անձանց. զի նա մարդասպան էր ի սկզբանէ ըստ Հրամանի Փրկչին մերոյ։ Եւ այս երկու ամ է, որ մի ի նոցանէ ոչ զղջացաւ և ոչ մեղա՛յ եկն ի բերանս նոցա, այլ հայհոյութիւն և նախատինք։ Եւ ոչ տգէտ ոք և անիմաստ ոք, այլ իմաստունք և կատարեալք՝ Զմաւոն և Գրիգոր վարդապետք 'ի Սիւնեաց և Ստեփաննոս անուն վարդապետ ի

յԵղեգեաց և այլքն, որ գրեալ եղև։ Զոր և մաղթեմք բոլորով սրտիւ մի՛ առնել նոցա դատաստան յահագին դատաստանն Աստուծոյ Հօր, այլ աստ առնել նոցա թողութիւն մեղաց ըստ մեծի ողորմութեան իւրում։ Ասասցեն երկինք և երկիր եղիցի՛ եղիցի՛։ Եւ Քրիստոսի փառք՝ յաւիտեանս ամէն։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՅԼ ՕՐԻՆԱԿՆԵՐԻՑ.

Գլ. Ա. 1. եկն. 2. Զագավանից. 3. Վասպուրականին . . . Թումա. 4. չիք «տէր Կիրակոս սուրբ ուխտին Մալնապատայ». 5. Պետրոս. 6. ձեռ. Վանքնայ, այլ օր. Վանստանայ. 7. տվեցին. 8. Կոստանդին կաթուղիկոսէ. . . ի բոք անկեալ . . . Զարքէն և նուիրակէն. 9. ի մեր կաթուղիկոսէն առնոյր. 10. ի մեզանէ. 11. Տէր. 12. ռշ. (1500) Ֆլաւրի. 13. առնէին. 14. անիծիւք նզովեցին և բանադրեցին. 15. յորմէ. 16. ասեն. 17. նզովք և որոշէ. 18. «Թողին զաղաղերն Մովսէս և զօրէնքն Մովսիսի». միւս օր. «Թողին զաստուածադիրն Մովսէս և օրէնքն Մովսիսի». 19. մեկնութիւն. 20. բեմբ. 21. ծալեալ∞ 22. սուրբ. Գ.գութիւն. 23. անուղղափառ. 24. երկու օրինակի մէջ կան և այս աւելորդ տողերը. «Զի մանկունքն զսկիզբն ապահութեան և գողութեան։ Եւ զհոգևոր տէրս կամապաշտութեանն. Եւ ամ մի ի լման ի գուռն սուրբ Էջմիածնին դեգերեցայ աշակերտք և վարդապետք (և վարդապետօք), և վասն ասացեալ պատճառաց թողի և փախեայ»։

Գլ. Բ. 1. շինութեան. 2. նզովեալ. 3. Ցհր. 4. օգոյս, աւդոյս. 5. հինգ (ե.) 6. Սահմանասար. 7. Երտաշէս. 8. փողով և թմբկով և զուռնով. 9. գնացաք. 10. հետ.

Գլ. Գ. 1. ի կաթուղիկոսութեանն. 2. մ' օր. 3. Ամստուածատուր վարդապետ Սաղմոսավանից. 4. քահանայից ծովու բոլորի=Վանայ ծովի, 5. Կալօտիկ. 6. իսկ այսօր 7. «տուն Պիրատոս և հրգս. պկ. և Հերովդէս» 8. բաբան. 9. Թովմէն այն. 10. կրօնաւորաց. 11. և զքոյն. 12. Զունակ 13. ի գաւառն. 14. զց Կիսն. 15. բայեր։